

►B Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին և 2004/35/ԵՀ հրահանգը փոփոխող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ և ԽՈՐՀՐԴԻ 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

(ՊՏ L 102, 11.04.2006թ., էջ 15)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

	թիվ	էջ	ամսաթիվ
►M1 Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հունիսի 18-ի թիվ 596/2009 (ԵՀ) կանոնակարգով	L 188	14	18.07.2009թ.

**▼B**

Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին և 2004/35/ԵՀ հրահանգը փոփոխող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (1),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով (3) սահմանված ընթացակարգի համաձայն և ելնելով Համաձայնեցման կոմիտեի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 8-ին հաստատված համատեղ տեքստից,

Քանի որ

- 1) Հանձնաժողովի հաղորդագրության մեջ, որը կոչվում է «Հանքարդյունահանման աշխատանքների անվտանգ իրականացումը. հանքահորերում վերջերս տեղի ունեցած վթարներին հաջորդող գործողությունները», արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման կարգավորմանն ուղղված նախաձեռնությունը դասվում է առաջնահերթությունների շարքին: Այդ գործողությունը նախատեսված է «Վտանգավոր նյութերի առկայության հետևանքով խոշոր վթարների առաջացման վտանգի հսկողության մասին» Խորհրդի 96/82/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 16-ի 2003/105/ ԵՀ հրահանգի համաձայն նախատեսվող

նախաձեռնություններին, ինչպես նաև հանքարդյունահանման աշխատանքներից գոյացող ոչ պիտանի ապարների և պոչանքների կառավարումը կարգավորող՝ առկա լավագույն տեխնիկական փաստաթղթի պատրաստմանը նպաստելու համար՝ «Աղտոտման համատեղ կանխարգելման և վերահսկման մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգի ներքո,

2) այդ հաղորդագրության մասին 2001 թվականի հուլիսի 5-ի իր բանաձևում Եվրոպական պառլամենտը խիստ կարևորել է արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների մասին հրահանգի անհրաժեշտությունը,

3) Շրջակա միջավայրին առնչվող՝ Համայնքի գործողությունների վեցերորդ ծրագիրը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 22-ի թիվ 1600/2002/ԵՀ որոշման նպատակը դեռևս գոյացող թափոնների մասով դրանց վտանգավորության աստիճանի նվազեցումն է ու հնարավորինս քիչ վտանգ ներկայացնելը, այդ նպատակներից ելնելով՝ առաջնահերթությունը պետք է տրվի թափոններից արժեքավոր նյութերի վերականգնմանը, և հատկապես դրանց վերամշակմանն ու օգտագործմանը, հեռացման ենթակա թափոնների քանակը պետք է նվազեցվի, իսկ դրանց հեռացումը պետք է կատարվի անվտանգ կերպով, հեռացման համար նախատեսված թափոնների մշակումը պետք է իրականացվի հնարավորինս մոտ այն վայրին, որտեղ դրանք գոյացել են, որպեսզի դա չհանգեցնի թափոնների մշակման աշխատանքների արդյունավետության նվազմանը: Թիվ 1600/2002/ԵՀ որոշման մեջ հիշատակվում են վթարներն ու աղետները և որպես առաջնահերթություն է սահմանվում նաև խոշոր վթարների պատճառած վնասների, հատկապես հանքահորերում տեղի ունեցող վթարների կանխարգելման աշխատանքներին օժանդակելը, ինչպես նաև լեռնահանքարդյունահանման թափոնների մասին ակտերի մշակումը: Թիվ 1600/2002/ԵՀ որոշման մեջ որպես առաջնահերթություն նշվում է նաև արդյունահանող արդյունաբերությունների կայուն կառավարման խթանումը նպատակ ունենալով կրճատելու բնապահպանական ազդեցությունը,

4) Շրջակա միջավայրի վերաբերյալ Համայնքի քաղաքականության նպատակներին համապատասխան՝ անհրաժեշտ է սահմանել նվազագույն պահանջներ՝ կանխելու կամ հնարավորինս նվազեցնելու համար շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա բացասական ազդեցությունները, որոնք առաջանում են արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման արդյունքում, ինչպես օրինակ՝ պոչանքներ (այսինքն՝ պինդ կամ կիսահեղուկ թափոններ, որոնք գոյանում են մի շարք մեթոդներով հանքանյութերի մշակման հետևանքով) և ոչ պիտանի ու մակաբացման ապարներ (այսինքն՝ նյութեր, որոնք արդյունահանման աշխատանքներում շարժվում են հանքաքար կամ հանքային մարմիններ ստանալու, այդ թվում՝ նախաարդյունաբերական մշակման փուլի ընթացքում) և հողաբուսական շերտ (այսինքն՝ հողի վերին շերտը) պայմանով, որ դրանք համարվում են թափոններ, ինչպես սահմանված է «Թափոնների մասին» 1975 թվականի հուլիսի 15-ի 75/442/ԵՏՀ հրահանգով (8),

5) Կայուն զարգացմանը նվիրված 2002 թվականի համաշխարհային զագաթնաժողովում Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում Յոհաննեսբուրգում

ընդունված Կայուն զարգացման իրականացման ծրագրի 24-րդ պարբերությանը համապատասխան՝ անհրաժեշտ է պահպանել տնտեսական ու սոցիալական զարգացման բնական ռեսուրսների պահուստը և դիմագրավել դեպի բնական ռեսուրսների քայքայում տանող ներկայիս միտումներին՝ կայուն ու միասնական միջոցներով կառավարելով բնական ռեսուրսների պահուստները,

6) համապատասխանաբար, սույն Հրահանգը կարգավորում է ցամաքում տեղակայված՝ արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների, այսինքն՝ հանքային ռեսուրսների հետախուզական աշխատանքների, արդյունահանման (ներառյալ նախաարդյունաբերական մշակման փուլը), հարստացման և պահպանման, ինչպես նաև բացահանքերի մշակման արդյունքում գոյացող թափոնների կառավարման գործընթացը: Այնուամենայնիվ, այդպիսի կառավարումը պետք է արտացոլի 75/442/ԵՏՀ հրահանգով սահմանված սկզբունքներն ու առաջնահերթությունները, որը, դրա 2(1)(բ)(ii) հոդվածին համապատասխան, շարունակում է կիրառվել արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման այն բոլոր հայեցակետերի նկատմամբ, որոնք չեն կարգավորվում սույն Հրահանգով,

7) կրկնօրինակումից և անհամաչափ վարչական պահանջներից խուսափելու համար՝ սույն Հրահանգի գործողության ոլորտը պետք է սահմանափակվի այնպիսի կոնկրետ գործողություններով, որոնք համարվում են առաջնահերթություններ՝ ելնելով Հրահանգով սահմանված նպատակներին հասնելու անհրաժեշտությունից,

8) համապատասխանաբար, սույն Հրահանգի դրույթները չպետք է կիրառվեն այնպիսի թափոնների հոսքերի նկատմամբ, որոնք, թեև գոյացած լինելով հանքային ռեսուրսների արդյունահանման կամ մշակման աշխատանքների ընթացքում, ուղղակիորեն կապված չեն արդյունահանման կամ մշակման գործընթացի հետ, օրինակ՝ սննդային թափոններ, նավթի թափոններ, շահագործումից դուրս եկած փոխադրամիջոցներ, սպառված մարտկոցներ և կուտակիչներ: Այդպիսի թափոնների կառավարման նկատմամբ պետք է կիրառվեն 75/442/ԵՏՀ հրահանգի դրույթները կամ «Թափոնների գերեզմանոցների մասին» Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/31/ԵՇ հրահանգը (9) կամ Համայնքի՝ ցանկացած այլ համապատասխան օրենսդրություն, ինչպես և կիրառվում է հետախուզման, արդյունահանման կամ մշակման տարածքներում գոյացող և սույն Հրահանգին համապատասխան թափոնների գործածության օբյեկտ չհամարվող վայր փոխադրված թափոնների նկատմամբ,

9) սույն Հրահանգը չպետք է կիրառվի նաև հանքային ռեսուրսների օֆշորային հետախուզման, արդյունահանման և մշակման արդյունքում գոյացող թափոնների կամ ջրի ներարկման ու պոմպերով մղվող ստորգետնյա ջրերի կրկնակի ներարկման նկատմամբ, մինչդեռ իներտ թափոնների, հետախուզվող ոչ վտանգավոր թափոնների, չաղտոտված հողի և տորֆի արդյունահանման, մշակման ու պահման արդյունքում գոյացող թափոնների նկատմամբ կիրառվում են միայն սահմանափակ թվով պահանջներ՝ ելնելով շրջակա միջավայրի համար դրանց առավել ցածր վտանգավորության աստիճանից: Անվտանգ ոչ իներտ թափոնների դեպքում անդամ պետությունները կարող են մեղմացնել կամ դադարեցնել որոշակի պահանջներ: Այնուամենայնիվ, այդ արտոնությունները չպետք է կիրառվեն Ա դասին պատկանող

թափոնների գործածության օբյեկտների նկատմամբ:

10) Ավելին, կարգավորելով արդյունահանող արդյունաբերություններում գոյացող այնպիսի թափոնների կառավարումը, որոնք կարող են լինել ռադիոակտիվ, սույն Հրահանգը չպետք է տարածվի ռադիոակտիվությանը հատուկ ասպեկտների վրա, որոնք կարգավորվում են «Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի համաձայն (Եվրատոմ),

11) 75/442/ԵՏՀ հրահանգով սահմանված սկզբունքներին ու առաջնահերթություններին և, մասնավորապես, դրա 3-րդ և 4-րդ հոդվածների դրույթներին հավատարիմ մնալու համար անդամ պետությունները պետք է ապահովեն, որ արդյունահանող արդյունաբերությամբ զբաղվող օպերատորները ձեռնարկեն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման արդյունքում առաջացող փաստացի կամ հնարավոր բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա կանխելու կամ նվազեցնելու համար,

12) այդ միջոցները պետք է հիմնվեն, մասնավորապես, 96/61/ԵՀ հրահանգով սահմանված առկա լավագույն տեխնոլոգիաների հասկացության հիման վրա, և երբ կիրառվում են այդպիսի տեխնոլոգիաներ, անդամ պետությունների խնդիրն է որոշել, թե հարկ եղած դեպքում, ինչպես կարող են հաշվի առնվել թափոնների գործածության օբյեկտների տեխնիկական բնութագրերը, դրանց աշխարհագրական դիրքն ու տեղի շրջակա միջավայրի պայմանները,

13) անդամ պետությունները պետք է ապահովեն, որ արդյունահանող արդյունաբերությամբ զբաղվող օպերատորները կազմեն թափոնների կառավարման համապատասխան ծրագրեր՝ արդյունահանման թափոնների կանխարգելման կամ նվազեցման, մշակման, թափոններից արժեքավոր նյութերի վերականգնման ու թափոնների հեռացման մասին: Այդ ծրագրերը պետք է կազմվեն այնպես, որ ապահովեն թափոնների կառավարման միջոցների համապատասխան պլանավորումը՝ նպատակ ունենալով նվազեցնելու թափոնների առաջացումն ու դրանց վտանգավորությունը և խրախուսելու թափոններից արժեքավոր նյութերի վերականգնումը: Ավելին, արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնները պետք է բնութագրվեն ըստ դրանց բաղադրության, որպեսզի հնարավորինս ապահովվի այդպիսի թափոնների հակազդեցությունը միայն կանխատեսելի եղանակներով,

14) վթարների առաջացման վտանգը նվազեցնելու և շրջակա միջավայրի ու մարդու առողջության համար պաշտպանության բարձր մակարդակ երաշխավորելու համար անդամ պետությունները պետք է ապահովեն, որ Ա դասին պատկանող թափոնների գործածության օբյեկտի ցանկացած օպերատոր ընդունի ու իրականացնի խոշոր վթարների կանխարգելման քաղաքականություն՝ թափոնների մասով: Կանխարգելիչ

միջոցների առնչությամբ դա պետք է հանգեցնի անվտանգության կառավարման համակարգի, դժբախտ վթարների դեպքում կիրառվող արտակարգ իրավիճակներում ձեռնարկվող արտակարգ իրավիճակներին արձագանքման ծրագրերի ձևավորմանը և անվտանգության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը այն անձանց միջև, ովքեր կարող են տուժել խոշոր վթարների հետևանքով: Վթարի դեպքում օպերատորներից պետք է պահանջվի, որ իրավասու մարմիններին ներկայացնեն համապատասխան ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է՝ շրջակա միջավայրին հասցվող փաստացի կամ հնարավոր վտանգը մեղմելու համար: Այդ կոնկրետ պահանջները չպետք է կիրառվեն արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների գործածության այն օբյեկտների նկատմամբ, որոնց վրա տարածվում է 96/82/ԵՀ հրահանգի գործողությունը,

15) թափոնների գործածության օբյեկտը չպետք է ընդգրկվի Ա դասում՝ ելնելով միայն Համայնքի այլ օրենսդրությամբ, մասնավորապես 92/91/ԵՏՀ (10) և 92/104/ԵՏՀ (11) հրահանգներով կարգավորվող արդյունահանվող արդյունաբերություններում աշխատողների անվտանգությանը և առողջությանը սպառնացող վտանգներից,

16) արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման հատուկ բնույթից ելնելով՝ անհրաժեշտ է ներմուծել դիմումի ներկայացման ու թույլտվության տրամադրման հատուկ ընթացակարգեր՝ այդպիսի թափոններ ստանալու համար օգտագործող թափոնների գործածության օբյեկտների մասով: Բացի դրանից՝ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ իրավասու մարմինները պարբերաբար վերանայեն և անհրաժեշտության դեպքում թարմացնեն թույլտվության տրամադրման պայմանները,

17) անդամ պետություններից պահանջվում է ապահովել, որ 1998 թվականի հունիսի 25–ի ՄԱԿ–ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հետ կապված հարցերում տեղեկատվության հասանելիության, որոշումներ կայացնելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիային (Օրհուսի կոնվենցիա) համապատասխան՝ հասարակությունը տեղեկացված լինի թափոնների կառավարման թույլտվության համար դիմումի մասին և շահագրգիռ հասարակությունը խորհրդատվություն ստանա՝ նախքան թափոնների կառավարման թույլտվություն ստանալը,

18) անհրաժեշտ է հստակ նշել արդյունահանող արդյունաբերություններին ծառայող թափոնների գործածության օբյեկտներին ներկայացվող պահանջները՝ կապված դրանց վայրի, կառավարման, հսկողության, փակման և կանխարգելիչ ու պաշտպանական միջոցների հետ, որոնք ձեռնարկվում են շրջակա միջավայրին սպառնացող ցանկացած վտանգի դեմ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հիմունքներով և, մասնավորապես, հողի մեջ թափոններից ծորացած կեղտաջրերի ներծծմամբ ստորգետնյա ջրերի աղտոտման դեմ,

19) անհրաժեշտ է հստակորեն սահմանել Ա դասին պատկանող՝ արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոններին ծառայող թափոնների գործածության

օբյեկտները՝ հաշվի առնելով այդպիսի օբյեկտների գործունեության և դրանցից թափոնների արտահոսքի հետևանքով տեղի ունեցող վթարների արդյունքում առաջացող աղտոտման հավանական ազդեցությունները,

20) Որոշակի պահանջներ, որոնց նպատակը վերգետնյա և (կամ) ստորգետնյա ջրերը պաշտպանելը, այդպիսի թափոնների կայունությունն ապահովելն է և համապատասխան դիտանցումը՝ այդպիսի գործողությունների դադարեցման պահին, պետք է կիրառվեն այն թափոնների նկատմամբ, որոնք արդյունահանման գործընթացի առնչությամբ՝ կրկին փոխադրվում են ստորերկրյա խոռոչներ՝ դրանց վերականգնման կամ կառուցման համար, ինչպես օրինակ՝ ստորերկրյա խոռոչներում այնպիսի միջոցների կառուցում կամ շահագործում, որոնք ապահովում են սարքավորումների, բեռնման հարթակների, պատնեշների, անվտանգության արգելապատնեշների կամ առափների մատչելիությունը: Համապատասխանաբար, այդպիսի թափոնների նկատմամբ չեն տարածվում սույն Հրահանգի պահանջները, որոնք առնչվում են բացառապես «թափոնների գործածության օբյեկտներին», բացառությամբ այն պահանջների, որոնք նշվում են ստորերկրյա խոռոչների մասին հատուկ դրույթի մեջ:

21) արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոններին ծառայող թափոնների գործածության օբյեկտների ճիշտ կառուցումն ու շահագործումն ապահովելու նպատակով անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ և ապահովեն, որ այդպիսի օբյեկտների նախագծումը, վայրի որոշումը և կառավարումն իրականացվեն տեխնիկապես գրագետ անձանց կողմից: Անհրաժեշտ է ապահովել, որ վերապատրաստման ու ձեռք բերված գիտելիքների միջոցով օպերատորներն ու անձնակազմն ունենան անհրաժեշտ հմտություններ: Բացի դրանից՝ իրավասու մարմինները պետք է համոզված լինեն, որ օպերատորներն ապահովում են համապատասխան միջոցներ թափոնների գործածության նոր օբյեկտների կառուցման ու շահագործման կամ թափոնների կուտակման (պահման) գոյություն ունեցող կայաններում ընդլայնում կամ փոփոխություն կատարելուն ուղղված ցանկացած գործողության առումով այդ թվում՝ այդպիսի վայրերի փակմանը հաջորդող փուլում,

22) անհրաժեշտ է սահմանել դիտանցման ընթացակարգեր՝ թափոնների գործածության օբյեկտների աշխատանքի ընթացքում և դրանց փակումից հետո: Ա դասին պատկանող թափոնների գործածության օբյեկտների՝ դրանց փակումից հետո դիտանցման և հսկողության իրականացման ժամկետը պետք է սահմանվի կոնկրետ թափոնների գործածության օբյեկտի վտանգավորությանը համաչափ՝ 1999/31/ԵՀ հրահանգով պահանջվող եղանակով,

23) անհրաժեշտ է սահմանել արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոններին ծառայող թափոնների գործածության օբյեկտների փակման ժամկետներն ու միջոցները և նշել օպերատորի պարտավորություններն ու պատասխանատվությունը փակմանը հաջորդող ժամանակահատվածում,

24) անդամ պետությունները պետք է պահանջեն արդյունահանող արդյունաբերությունների

օպերատորներից իրականացնել դիտանցում և վարչական հսկողություն՝ ջրի ու հողի աղտոտումը կանխարգելելու և նրանց պատկանող թափոնների գործածության օբյեկտներից շրջակա միջավայրին կամ մարդու առողջությանը հասցվող ցանկացած բացասական ազդեցություն սահմանելու համար: Բացի դրանից՝ ջրի աղտոտումը նվազեցնելու նպատակով՝ ջրընդունիչ կառույցներ թափոնների արտանետման գործընթացը պետք է համապատասխանի Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000/60/ԵՀ հրահանգին (12): Ավելին, հաշվի առնելով որոշակի արդյունահանող արդյունաբերություններում գոյացող ցիանիդի և ցիանային միացությունների վտանգավոր ու թունավոր ազդեցությունները՝ պոչամբարներում դրանց կոնցենտրացիան պետք է նվազեցվի և հասցվի հնարավոր ամենացածր մակարդակին՝ օգտագործելով առկա լավագույն տեխնոլոգիաները: Համապատասխանաբար պետք է սահմանվեն կոնցենտրացիայի առավելագույն սահմանաչափերը, որոնք ամեն դեպքում պետք է համապատասխանեն այդպիսի ազդեցությունները կանխարգելելուն՝ ուղղված սույն Հրահանգի կոնկրետ պահանջներին,

25) արդյունահանող արտադրություններին ծառայող թափոնների գործածության օբյեկտի օպերատորից պետք է պահանջվի ֆինանսական երաշխիքի կամ համարժեք միջոցների տրամադրում անդամ պետությունների կողմից որոշված ընթացակարգերին համապատասխան՝ ապահովելով, որ կատարվեն թույլտվությունից բխող բոլոր պարտականությունները, այդ թվում՝ թափոնների գործածության օբյեկտի փակմանը և փակմանը հաջորդող փուլին առնչվող պարտականությունները: Ֆինանսական երաշխիքը պետք է բավարարի թափոնների գործածության օբյեկտից վնասված հողատարածքների՝ ներառյալ թափոնների գործածության օբյեկտի վերականգնման ծախսերը՝ համապատասխան որակավորում ունեցող և անկախ երրորդ անձի կողմից ծածկելու համար, ինչպես նկարագրված է թափոնների կառավարման ծրագրում, որը կազմվում է 5-րդ հոդվածի համաձայն և պահանջվում է 7-րդ հոդվածով սահմանված թույլտվությամբ: Անհրաժեշտ է նաև, որ այդպիսի երաշխիք ապահովվի՝ նախքան թափոնների գործածության օբյեկտում կուտակման աշխատանքների մեկնարկը և այն պարբերաբար ենթարկվի փոփոխության: Ավելին, «վճարում է աղտոտողը» սկզբունքին և «Բնապահպանական վնասները կանխարգելելու ու վերացնելու առնչությամբ բնապահպանական պարտավորության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգին (13) համապատասխան կարևոր է հստակեցնել այն հանգամանքը, որ արդյունահանող արդյունաբերություններին ծառայող թափոնների գործածության օբյեկտի օպերատորը ենթարկվում է համապատասխան պատասխանատվության՝ իր գործողությունների արդյունքում շրջակա միջավայրին հասցված վնասի կամ այդպիսի վնասի անմիջական սպառնալիքի համար,

26) եթե արդյունահանող արդյունաբերություններին ծառայող թափոնների գործածության օբյեկտներն իրենց գործունեությամբ կարող են զգալի բացասական ազդեցություններ գործել շրջակա միջավայրի վրա անդրսահմանային մակարդակում, որի արդյունքում կարող է վտանգվել մարդու առողջությունն այլ անդամ պետության տարածքում, պետք է գոյություն ունենա ընդհանուր ընթացակարգ՝ հարևան երկրների միջև խորհրդատվության գործընթացը դյուրացնելու համար: Դա պետք է կատարվի, որպեսզի ապահովվի իշխանությունների միջև համապատասխան տեղեկատվության փոխանակումը և հանրության՝ պատշաճ կարգով իրազեկվածությունն այն թափոնների

գործածության օբյեկտների մասին, որոնք կարող են բացասական ազդեցություններ ունենալ այդ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա,

27) անհրաժեշտ է, որ անդամ պետություններն ապահովեն, որ իրավասու մարմինները սահմանեն տեսչական ստուգումների կամ հսկողության համարժեք միջոցների արդյունավետ համակարգ՝ արդյունահանող արդյունաբերություններին ծառայող թափոնների գործածության օբյեկտների մասով: Չսահմանափակելով թույլտվություն ստացած օպերատորի պարտականությունները՝ նախքան կուտակման աշխատանքների մեկնարկը պետք է իրականացվի տեսչական ստուգում՝ թույլտվության պայմանների ապահովումը ստուգելու համար: Բացի դրանից՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ օպերատորները և նրանց իրավահաջորդները թարմացնեն այդպիսի թափոնների գործածության օբյեկտներին վերաբերող փաստաթղթերը, և որ օպերատորներն իրենց իրավահաջորդներին փոխանցեն այդ թափոնների գործածության օբյեկտների վիճակին ու դրա գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը,

28) անդամ պետությունները սույն Հրահանգի իրականացման մասին պարբերական զեկույցներ են ուղարկում Հանձնաժողով, նաև տեղեկություններ են տրամադրում վթարների և վտանգավոր իրավիճակների մասին: Այդ զեկույցների հիման վրա Հանձնաժողովը պետք է զեկույց ներկայացնի Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ,

29) անդամ պետությունները պետք է կանոններ սահմանեն այն պատժամիջոցների վերաբերյալ, որոնք կիրառելի են սույն Կանոնակարգի դրույթների խախտումների նկատմամբ, և ապահովեն այդ պատժամիջոցների իրականացումը: Այդ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ,

30) անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրենց տարածքում գտնվող՝ թափոնների գործածության փակ, ներառյալ լքված օբյեկտներում իրականացվի գույքագրում, որպեսզի բացահայտվեն այն վայրերը, որոնք բնապահպանական լուրջ վնասներ են պատճառում կամ միջնաժամկետում կամ կարճաժամկետում կարող են լուրջ վտանգ ներկայացնել մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար: Իրականացված գույքագրումները հիմք են ծառայում միջոցների համապատասխան ծրագրի մշակման համար,

31) Հանձնաժողովը պետք է ապահովի գիտական և տեխնիկական տեղեկատվության համապատասխան փոխանակումն այն մասին, թե ինչպես պետք է գույքագրում իրականացվի թափոնների գործածության փակ օբյեկտներում անդամ պետության մակարդակով, ինչպես նաև մեթոդաբանությունների մշակման մասին՝ օգնելով անդամ պետություններին պահպանել սույն Հրահանգի դրույթները՝ թափոնների գործածության փակ օբյեկտների վերականգնման ժամանակ: Ավելին, տեղեկատվության փոխանակումը առկա լավագույն տեխնոլոգիաների մասին պետք է իրականացվի անդամ պետությունների ներսում և դրանց միջև,

32) Պայմանագրի 6-րդ հոդվածի հետևողական կիրառության նպատակով՝ շրջակա



միջավայրի պաշտպանության պահանջները պետք է ընդգրկվեն Համայնքի քաղաքականության և գործունեության մեջ՝ մասնավորապես նպատակ ունենալով խթանելու կայուն զարգացումը,

33) սույն Հրահանգը կարող է օգտակար միջոց լինել և հաշվի առնվել, երբ ստուգվում են, որ զարգացմանն ուղղված օգնության համատեքստում Համայնքից ֆինանսավորում ստացող նախագծերը ներառեն այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հնարավորինս կանխարգելելու կամ նվազեցնելու համար: Այդպիսի մոտեցումը համապատասխանում է Պայմանագրի 6-րդ հոդվածին, մասնավորապես զարգացմանն ուղղված համագործակցության ոլորտում շրջակա միջավայրի պաշտպանության պահանջները Համայնքի քաղաքականության մեջ ինտեգրելու առումով,

34) սույն Հրահանգի նպատակը, այն է՝ արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման բարելավվումը, չի կարող բավարար չափով իրականացվել միայնակ գործող անդամ պետություններում, քանի որ այդպիսի թափոնների թերի կառավարումը կարող է անդրսահմանային բնության աղտոտման պատճառ դառնալ: Համաձայն «վճարում է աղտոտողը» սկզբունքի՝ անհրաժեշտ է մասնավորապես, նկատի ունենալ արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների հետևանքով շրջակա միջավայրին հասցված ցանկացած վնաս, և այդ սկզբունքի՝ ազգային մակարդակում տարբեր կիրառությունները կարող են հանգեցնել զգալի անհամապատասխանությունների օպերատորների ֆինանսական բեռի հարցում: Ավելին, արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարմանն ուղղված ազգային տարբեր քաղաքականությունները խոչընդոտում են այդպիսի թափոնների անվտանգ ու պատասխանատու կառավարման նվազագույն մակարդակի ապահովումը և Համայնքի ամբողջ տարածքում դրանց առավելագույն չափով վերականգնման նպատակի իրականացումը: Ուստի, քանի որ սույն Հրահանգի ծավալից և բնույթից ելնելով՝ դրա նպատակը կարող է առավել արդյունավետորեն իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ձեռնարկել սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է Պայմանագրի 5-րդ հոդվածով: Համաչափության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է այդ հոդվածով, սույն Հրահանգը չի սահմանազանցում այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ միջոցների շրջանակը,

35) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան, որը սահմանում է Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը (14),

36) սույն Հրահանգի փոխատեղման պահին գոյություն ունեցող թափոնների գործածության օբյեկտների գործունեությունը պետք է կանոնակարգվի, և սահմանված ժամկետում պետք է ձեռնարկվեն այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի այդ կայանները համապատասխանեն սույն Հրահանգի պահանջներին,

37) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան (15)՝ անդամ պետությունները խրախուսվում են, իրենց և Համայնքի շահերից ելնելով, սույն Հրահանգի ու փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ կազմելու և դրանք հրապարակելու հարցում,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

#### **Կարգավորման առարկան**

Սույն Հրահանգը նախատեսում է միջոցներ, ընթացակարգեր և ցուցումներ, որպեսզի հնարավորինս կրճատվեն շրջակա միջավայրի, մասնավորապես ջրի, օդի, հողի, կենդանական ու բուսական աշխարհի և լանդշաֆտի վրա ունեցած բացասական ազդեցությունները, ինչպես նաև մարդու առողջությանը սպառնացող բոլոր հնարավոր վտանգները, որոնք առաջանում են արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման արդյունքում:

### *Հոդված 2*

#### **Գործողության ոլորտը**

1. Համաձայն 2-րդ և 3-րդ պարբերությունների՝ սույն Հրահանգը կարգավորում է հանքային ռեսուրսների հետախուզման, արդյունահանման, մշակման և պահպանման, ինչպես նաև բացահանքերի մշակման արդյունքում գոյացող թափոնների կառավարումը (այսուհետ՝ արդյունահանման թափոններ):

2. Ստորև նշվածը չպետք է ներառվի սույն Հրահանգի գործողության ոլորտում՝

ա) հանքային ռեսուրսների հետախուզման, արդյունահանման ու մշակման և բացահանքերի մշակման արդյունքում գոյացող թափոններ, որոնք չեն առաջանում ուղղակիորեն այդ գործողություններից.

բ) հանքային ռեսուրսների օֆշորային հետախուզման, արդյունահանման և մշակման արդյունքում գոյացող թափոններ.

գ) ջրերի ներմղում և պոմպերով մղվող ստորգետնյա ջրերի կրկնակի ներմղում, ինչպես սահմանված է 2000/60/ԵՀ հրահանգի 11(3)(ժ) առաջին և երկրորդ պարբերությոներով՝ այդ հոդվածով թույլատրված չափով:

3. Հանքային ռեսուրսների հետախուզման, արդյունահանման, մշակման ու պահպանման, ինչպես նաև բացահանքերի մշակման արդյունքում գոյացող իներտ թափոնների և չաղտոտված հողի, ինչպես նաև տորֆի արդյունահանման, մշակման ու պահպանման արդյունքում գոյացող թափոնների նկատմամբ չպետք է կիրառվեն 7-րդ, 8-րդ, 11(1) և (3), 12-րդ, 13(6), 14-րդ և 16-րդ հոդվածների դրույթները, եթե դրանք չեն պահվում Ա դասին պատկանող թափոնների գործածության օբյեկտներում:

3. Իրավասու մարմինը կարող է կրճատել կամ դադարեցնել հանքային ռեսուրսների հետախուզման արդյունքում գոյացող ոչ վտանգավոր թափոնների, բացառությամբ նավթի և էվապորիտների (բացի գիպսից և անհիդրիդից) կուտակման նկատմամբ, ինչպես նաև չաղտոտված հողի և տորֆի արդյունահանման, մշակման ու պահպանման արդյունքում գոյացող թափոնների կուտակման նկատմամբ ներկայացվող պահանջները՝ այնքանով, որքանով իրավասու մարմինը համոզված է, որ կատարված են 4-րդ հոդվածի պահանջները:

3. Անդամ պետությունները կարող են կրճատել կամ դադարեցնել ոչ վտանգավոր և ոչ իներտ թափոնների նկատմամբ ներկայացվող՝ 11(3), 12(5) և (6), 13(6), 14-րդ և 16-րդ հոդվածների պահանջները, եթե դրանք չեն կուտակվել Ա դասին պատկանող թափոնների գործածության օբյեկտներում:

4. Չսահմանափակելով Համայնքի այլ օրենքների դրույթները՝ սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ մտնող թափոնների նկատմամբ չի կիրառվում 1999/31/ԵՇ հրահանգը:

### *Հոդված 3*

#### **Սահմանումները**

Սույն Հրահանգի նպատակներով՝

1) թափոններ՝ ինչպես սահմանված է 75/442/ԵՏՀ հրահանգի 1(ա) հոդվածով.

2) վտանգավոր թափոններ՝ ինչպես սահմանված է «Վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/689/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածով (16).

3) իներտ թափոններ՝ թափոններ, որոնք չեն ենթարկվում զգալի ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական փոփոխությունների: Իներտ թափոնները չեն լուծվի, այրվի կամ այլ կերպ մտնի ֆիզիկական կամ քիմիական ռեակցիայի մեջ, տրոհվի միկրոօրգանիզմների ազդեցության ներքո կամ բացասական ազդեցություն ունենան դրանց հետ շփման մեջ մտնող այլ նյութերի հետ՝ առաջացնելով շրջակա միջավայրի աղտոտում կամ վնաս հասցնելով մարդու առողջությանը: Թափոնների ծորունակությունը և դրանցում աղտոտիչների պարունակությունը, ինչպես նաև դրանցից ծորացող կեղտաջրերի էկոտոքսիկ ազդեցությունը պետք է լինի աննշան և, մասնավորապես, չպետք է վնասի մակերևութային ջրերի և (կամ) ստորգետնյա ջրերի որակը.

4) չաղտոտված հող՝ հողի վերին շերտ, որ հետախուզական աշխատանքների ընթացքում հեռացվել է և որը չի համարվում աղտոտված՝ այն անդամ պետության ազգային օրենսդրությամբ, որտեղ գտնվում է համապատասխան տարածքը կամ Համայնքի իրավունքի համաձայն.

5) հանքային ռեսուրս կամ հանքանյութ՝ երկրակեղևում բնականորեն գոյացող օրգանական կամ անօրգանական ծագում ունեցող նստվածքներ, օրինակ՝ էներգետիկ վառելանյութեր, մետաղական հանքանյութեր, արդյունաբերության և շինարարության մեջ օգտագործվող (ինդուստրիալ) հանքանյութեր՝ բացառությամբ ջրի.

6) արդյունահանող արդյունաբերություններ՝ բոլոր հաստատությունները և կազմակերպությունները, որոնք առևտրային նպատակներով զբաղվում են հանքային ռեսուրսների մակերեսային կամ ստորգետնյա արդյունահանման, ներառյալ հորատանցման միջոցով արդյունահանման գործունեությամբ, կամ արդյունահանված նյութերի մշակմամբ.

7) ավամերձ տարածք՝ սովորական կամ միջին ուժգնության մակընթացության և տեղատվության ժամանակ ջրի ամենացածր սահմանագծից սկսած դեպի ցամաք ձգվող ծովի և ծովի հատակի հատվածը.

8) մշակում՝ հանքային ռեսուրսների, ներառյալ բացահանքերի մշակումից ստացված հանքային ռեսուրսների վրա իրականացված մեխանիկական, ֆիզիկական, կենսաբանական, ջերմային կամ քիմիական գործընթացներ կամ այդպիսի գործընթացների զուգորդում, որոնց նպատակը հանքանյութի արդյունահանումն է, այդ թվում՝ չափսերի փոփոխությունը, դասակարգումը, անջատումը և ավելալահանումը, ինչպես նաև նախկինում խոտան համարված թափոնների վերամշակումը՝ բացառելով սակայն հալման, ջերմային մշակման (բացառությամբ կրաքարի այրման) ու լեռնարդյունաբերական գործընթացները.

9) պոչանքներ՝ պինդ և կիսահեղուկ թափոններ, որոնք մնում են արժեքավոր հանքանյութերը ավելի քիչ արժեքավոր ապարներից անջատելուց (օրինակ՝ մանրացման, աղալու, ըստ չափերի տեսակավորման, ֆլոտացիայի և այլ ֆիզիկաքիմիական մեթոդներով մշակելուց) հետո .

10) թափոնակույտ՝ մակերևույթում պինդ թափոնները կուտակելու համար նախատեսված կառուցվածք.

11) պատվար՝ ջրի և (կամ) թափոնների հոսքը ջրամբարում կարգավորելու կամ սահմանափակելու համար նախատեսված կառուցվածք.

12) ջրամբար՝ մանրահատիկ թափոնների, որպես կանոն՝ տարբեր չափերի հասնող ազատ ջրերի հետ պոչանքների հեռացման համար նախատեսված բնական կամ կառուցված կայան, որոնք առաջանում են բնական ռեսուրսների մշակման և տեխնիկական ջրերի մաքրման ու վերամշակման արդյունքում.

13) թույլ թթվում դիսոցվող ցիանիդ՝ ցիանիդ կամ ցիանային միացություններ, որոնք դիսոցվում են սահմանված pH-ով թույլ թթուներում.

14) թափոններից ծորացած կեղտաջրեր՝ հեղուկ, որ ծորում է կուտակված թափոններից և արտահոսում թափոնների գործածության օբյեկտներից կամ պարունակվում դրանցում՝ ներառյալ աղտոտված դրենաժը, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա՝ համապատասխան կերպով մշակման չենթարկվելու դեպքում.

15) թափոնների գործածության օբյեկտ՝ ցանկացած տարածք, որ նախատեսված է պինդ կամ հեղուկ վիճակում կամ լուծույթի կամ կախույթի տեսքով արդյունահանման թափոնների հավաքման կամ պահման համար հետևյալ ժամկետներով՝

— ժամկետներ սահմանված չեն Ա դասին պատկանող թափոնների գործածության օբյեկտների և թափոնների կառավարման ծրագրով՝ որպես վտանգավոր բնութագրվող թափոնների համար նախատեսված վայրերի համար.

— ավելի քան վեց ամիս հանկարծակի գոյացող վտանգավոր թափոնների համար նախատեսված վայրերի համար.

— ավելի քան մեկ տարի անվտանգ ոչ իներտ թափոնների համար նախատեսված վայրերի համար.

— ավելի քան երեք տարի՝ չաղտոտված հողի, հետախուզվող ոչ վտանգավոր թափոնների, տորֆի օգտահանման, մշակման և պահման արդյունքում գոյացող թափոնների ու իներտ թափոնների համար նախատեսված վայրերի համար:

Համարվում է, որ այդպիսի օբյեկտներում պետք է լինի ինչ-որ պատվար կամ որևէ այլ կառուցվածք, որը պետք ունենա պարունակելու, պահպանելու, սահմանափակելու կամ այլ կերպ այդպիսի օբյեկտի գործունեությանն աջակցելու գործառույթ, ինչպես նաև թափոնակույտեր և ամբարներ (որը չի նշանակում, որ սահմանափակվում են միայն դրանցով), որոնք օգտագործվում են թափոններից արժեքավոր նյութերը վերականգնելու ու

շինարարական նպատակներով, բացառությամբ ստորերկրյա խոռոչների, ուր կրկին տեղափոխվում են թափոնները հանքանյութի արդյունահանումից հետո.

16) խոշոր վթար՝ սույն Հրահանգով կարգավորվող ցանկացած տարածքում արդյունահանման թափոնների կառավարման աշխատանքների ընթացքում տեղի ունեցած միջադեպ, որն անմիջապես կամ ժամանակի ընթացքում լուրջ վնաս կարող է հասցնել մարդու առողջությանը և (կամ) շրջակա միջավայրին՝ տարածքում կամ տվյալ տարածքի սահմաններից դուրս.

17) վտանգավոր նյութ՝ 67/548/ԵՏՀ հրահանգի (17) կամ 1999/45/ԵՏՀ հրահանգի (18) իմաստով վտանգավոր համարվող նյութ, խառնուրդ կամ պատրաստուկ.

18) առկա լավագույն տեխնոլոգիաներ՝ ինչպես սահմանված են 96/61/ԵՀ հրահանգի 2(11) հոդվածով.

19) ջրընդունիչ կառույց՝ մակերևութային, ստորգետնյա, միջանկյալ և առափնյա ջրեր, ինչպես համապատասխանաբար սահմանված է 2000/60/ԵՀ հրահանգի 2(1), (2), (6) և (7) հոդվածով.

20) վերականգնում՝ թափոնների գործածության օբյեկտի գործունեությունից վնասված հողի մշակում այնպես, որ հողը բավարար չափով վերականգնվի՝ հողի որակի, բնական միջավայրերի, քաղցրահամ ջրերի համակարգերի, լանդշաֆտի և համապատասխան շահավետ գործածության առումով.

21) հետախուզություն՝ տնտեսական արժեք ներկայացնող հանքային ապարների որոնում՝ ներառյալ նմուշառումը, հավաքական նմուշառումը, հորատումը և խորափորը, բացառությամբ այդպիսի ապարների մշակման համար անհրաժեշտ ցանկացած աշխատանք և իրականացվող արդյունահանման աշխատանքներին ուղղակիորեն առնչվող ցանկացած գործունեություն.

22) հասարակություն՝ մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և, ազգային օրենսդրության կամ պրակտիկայի համաձայն, նրանց խմբավորումները, կազմակերպությունները կամ խմբերը.

23) շահագրգիռ հասարակություն՝ սույն Հրահանգի 6-րդ և 7-րդ հոդվածների համաձայն՝ շրջակա միջավայրի հետ կապված որոշումների կայացման արդյունքում ազդեցություն կրող կամ ազդեցություն կրելու հավանականություն ունեցող անձինք. սույն սահմանման նպատակով շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող և, ազգային իրավունքի համաձայն, բոլոր պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունները համարվում են շահագրգիռ զանգված.

24) օպերատոր՝ արդյունահանման թափոնների կառավարման համար պատասխանատու ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ այն անդամ պետության ազգային իրավունքին համապատասխան, որտեղ տեղի է ունենում թափոնների կառավարումը, այդ թվում՝ արդյունահանման թափոնների ժամանակավոր պահման, ինչպես նաև՝ աշխատանքի և փակմանը հաջորդող փուլերում.

25) թափոնների սեփականատեր՝ արդյունահանման թափոններ առաջացնողը կամ որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի սեփականությունն է թափոնը.

26) իրավասու անձ՝ ֆիզիկական անձ, որն ունի սույն Հրահանգից բխող պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական գիտելիքներ և փորձ, ինչպես սահմանված է տվյալ անձի գործունեության անդամ պետության ազգային իրավունքով.

27) իրավասու մարմին՝ մարմին կամ մարմիններ, որոնց վրա անդամ պետությունները սույն Հրահանգից բխող պարտականությունների կատարման համար պատասխանատվություն են դնում:

28) տարածք՝ կոնկրետ աշխարհագրական դիրքում գտնվող ամբողջ հողատարածքը, որը գտնվում է օպերատորի վարչական հսկողության ներքո:

29) էական փոփոխություն՝ թափոնների գործածության օբյեկտում տեղի ունեցող կառուցվածքային կամ գործառնական փոփոխություն, որն իրավասու մարմնի կարծիքով, կարող է զգալի բացասական ազդեցություններ ունենալ մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա:

#### *Հոդված 4*

### **Ընդհանուր պահանջները**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ և ապահովում, որ արդյունահանման թափոնները կառավարվեն՝ չվնասելով մարդու առողջությունը և չկիրառելով այնպիսի ընթացակարգեր կամ մեթոդներ, որոնք կարող են վնաս հասցնել շրջակա միջավայրին և մասնավորապես ջրին, օդին, հողին և բուսականությանն ու կենդանական աշխարհին, առանց անհարմարություններ ստեղծելու աղմուկի կամ հոտերի միջոցով կամ բացասական ազդեցություն գործելու լանդշաֆտի կամ հատուկ հետաքրքրության վայրերի վրա: Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի արգելվի արդյունահանման թափոնների թափումը, դատարկումը կամ անվերահսկելի տեղադրումը:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ օպերատորը ձեռնարկի բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ արդյունահանման թափոնների կառավարման արդյունքում առաջացած՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու կամ հնարավորինս նվազեցնելու համար: Դա ներառում է թափոնների գործածության օբյեկտի կառավարումը, նաև դրա փակումից հետո, և այդ վայրում խոշոր վթարների կանխարգելումն ու շրջակա միջավայրի և մարդու առողջության համար դրանց հետևանքների սահմանափակումը:

3. 2-րդ պարբերությունում նշված միջոցները հիմնվում են առկա լավագույն տեխնոլոգիաների վրա՝ առանց նախատեսելու որևէ տեխնիկայի կամ տեխնոլոգիայի կիրառումը, բայց հաշվի առնելով թափոնների գործածության օբյեկտի տեխնիկական առանձնահատկությունները, դրա աշխարհագրական դիրքը և տեղի բնապահպանական պայմանները:

#### *Հոդված 5*

### **Թափոնների կառավարման պլանը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ օպերատորը կազմի թափոնների կառավարման համապատասխան ծրագրեր՝ արդյունահանման թափոնների նվազեցման, մշակման, թափոններից արժեքավոր նյութերի վերականգնման ու հեռացման մասին՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքը:

2. Թափոնների կառավարման պլանի նպատակներն են՝

ա) կանխարգելել կամ նվազեցնել թափոնների արտադրությունը և դրանց վտանգավորությունը՝ մասնավորապես հաշվի առնելով՝

ի) թափոնների կառավարումը նախագծման փուլում և հանքարդյունահանման ու մշակման համար օգտագործվող մեթոդների ընտրություն կատարելիս:

ii) փոփոխություններ, որոնց կարող են ենթարկվել արդյունահանման թափոնները՝ մակերեսի ավելացման ու վերգետնյա պայմանների հետ շփման դեպքում:

iii) հանքանյութի արդյունահանումից հետո արդյունահանման թափոնները ստորերկրյա խոռոչ կրկին փոխադրելը, որքանով հնարավոր է տեխնիկական և տնտեսական առումով և ընդունելի բնապահպանական տեսանկյունից՝ Համայնքի մակարդակով առկա բնապահպանական չափանիշներին և, հարկ եղած դեպքում, սույն Հրահանգի պահանջներին համապատասխան:

iv) թափոնների գործածության օբյեկտի փակումից հետո հողաբուսական շերտով նորից փակելը, կամ եթե դա գործնականում անհնար է, դրա օգտագործումը մեկ այլ տեղում:

v) հանքային ռեսուրսների մշակման համար առավել քիչ վտանգավոր նյութերի օգտագործումը:

բ) թափոններից արժեքավոր նյութերի վերականգնմանը նպաստելը այդպիսի թափոնների օգտահանման, բազմակի օգտագործման կամ գործածության միջոցով, եթե դա ընդունելի է բնապահպանական տեսանկյունից Համայնքի մակարդակով առկա բնապահպանական չափանիշներին և, հարկ եղած դեպքում, սույն Հրահանգի պահանջներին համապատասխան:

գ) արդյունահանման թափոնների անվտանգ հեռացման ապահովումը կարճաժամկետ և երկարաժամկետ հիմունքներով, մասնավորապես նախագծման փուլում հաշվի առնելով թափոնների գործածության օբյեկտի գործունեության ընթացքում և դրա փակումից հետո կառավարումը և ընտրելով այնպիսի նախագիծ, որը՝

i) պահանջում է թափոնների գործածության փակված օբյեկտի դիտանցում, հսկողություն և կառավարում նվազագույն չափով և, հնարավորության դեպքում, իհարկե դրանց բացառում:

ii) կանխարգելում կամ առնվազն նվազեցնում է երկարաժամկետ ազդեցություն ունեցող ցանկացած բացասական գործոն, որն, օրինակ, վերագրվում է թափոնների գործածության օբյեկտից օդի կամ ջրի միջոցով տարածվող աղտոտիչներին:

iii) ապահովում է նախկինում գոյություն ունեցած հողի մակերևույթից ավելի բարձր խոյացող պատվարների կամ թափոնակույտի գետտեխնիկական կայունությունը երկարաժամկետ հիմունքներով:

3. Թափոնների կառավարման ծրագիրը պարունակում է առնվազն հետևյալ տեղեկությունները՝

ա) կիրառելիության դեպքում, թափոնների գործածության օբյեկտի համար առաջարկվող դասակարգումը՝ III հավելվածով սահմանված չափորոշիչներին համապատասխան:

— եթե պահանջվում է Ա դասին պատկանող թափոնների գործածության օբյեկտ, փաստաթուղթ, որը ցույց է տալիս, որ գործողության մեջ կդրվեն խոշոր վթարների կանխարգելման քաղաքականություն, դրա իրականացմանն ուղղված անվտանգության կառավարման համակարգ և արտակարգ իրավիճակներին արձագանքման ներքին ծրագիր՝ 6(3) հոդվածին համապատասխան:

— եթե օպերատորը գտնում է, որ անհրաժեշտ չէ Ա դասին պատկանող թափոնների գործածության օբյեկտ, այդ հանգամանքը հավաստող բավարար տեղեկություններ՝ ներառյալ վթարների առաջացման հնարավոր վտանգների սահմանում:

բ) թափոնների բնութագրումը II հավելվածին համապատասխան և գործառնական փուլում արտադրվելիք արդյունահանման թափոնների հաշվարկված ընդհանուր քանակության մասին նշում:

գ) այդպիսի թափոններ առաջացնող գործողությունների և այն մշակման նկարագիրը, որին դրանք հետագայում ենթարկվում են.

դ) նկարագրություն, թե ինչպիսի բացասական ազդեցություններ կարող են կրել շրջակա միջավայրը և մարդու առողջությունն այդպիսի թափոնների հեռացումից ու այն կանխարգելիչ միջոցները՝ ներառյալ 11(2)(ա), (բ), (դ) և (ե) հոդվածում նշված հայեցակետերը, որոնք ձեռնարկվում են աշխատանքի ընթացքում և փակումից հետո՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար.

ե) հսկողության ու դիտանցման առաջարկված ընթացակարգերը՝ համաձայն 10-րդ հոդվածի՝ կիրառելիության դեպքում, և 11(2)(գ) հոդվածի.

զ) փակմանը վերաբերող առաջարկված ծրագիրը, ներառյալ վերականգնումը, փակումից հետո կիրառվող ընթացակարգերը և դիտանցումը, ինչպես նախատեսված է 12-րդ հոդվածով.

է) 2000/60/ԵՀ հրահանգին համապատասխան՝ ջրի որակի վատթարացումը կանխելուն և համաձայն 13-րդ հոդվածի՝ օդի ու հողի աղտոտումը կանխելուն կամ նվազեցնելուն ուղղված միջոցները.

ը) թափոնների գործածության օբյեկտի գործունեության արդյունքում ազդեցության ենթարկվող հողի վիճակի ուսումնասիրություն:

3. Թափոնների կառավարման ծրագիրը պետք է տրամադրի բավարար տեղեկություններ, որոնք հնարավորություն կտան իրավասու մարմիններին գնահատելու օպերատորի կարողությունները՝ կապված թափոնների կառավարման ծրագրի՝ 2-րդ պարբերությունում նշված նպատակներն իրականացնելու և սույն Հրահանգով սահմանված իր պարտականությունները կատարելու հետ: Ծրագրում պետք է բացատրվի, թե թափոնների կառավարման ծրագրի՝ 2(ա) պարբերությամբ սահմանված նպատակներն ինչպես կիրագործվեն 2(ա)(1) պարբերությունում նշված կարգով ընտրված տարբերակի և մեթոդի միջոցով:

4. Թափոնների կառավարման ծրագիրը վերանայվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ և (կամ) հարկ եղած դեպքում, փոփոխվում թափոնների գործածության օբյեկտի աշխատանքում կամ կուտակված թափոններում տեղ գտած էական փոփոխությունների դեպքում: Իրավասու մարմինը տեղյակ է պահվում ցանկացած փոփոխության մասին:

5. Ազգային կամ Համայնքի այլ օրենսդրության համաձայն կազմված և 3-րդ պարբերությունում նշված տեղեկությունները պարունակող ծրագրերը կարող են օգտագործվել, եթե դա կանխում է տեղեկությունների անհարկի կրկնօրինակումը և օպերատորի կրկնակի աշխատանքը՝ պայմանով, որ կատարված են 1-4-րդ պարբերություններով սահմանված բոլոր պահանջները:

6. Իրավասու մարմինը հաստատում է թափոնների կառավարման ծրագիրն անդամ պետությունների կողմից որոշված ընթացակարգերի հիման վրա և վերահսկում դրանց իրականացումը:

### *Հոդված 6*

#### **Խոշոր վթարների կանխարգելումը և տեղեկատվությունը**

1. Սույն հոդվածը կիրառվում է Ա դասին պատկանող թափոնների գործածության օբյեկտների նկատմամբ՝ բացառությամբ 96/82/ԵՀ հրահանգով կարգավորվող թափոնների գործածության օբյեկտների:

2. Չսահմանափակելով Համայնքի այլ օրենսդրական ակտերի և մասնավորապես 92/91/ԵՏՀ և 92/104/ԵՏՀ հրահանգների դրույթները՝ անդամ պետություններն ապահովում են, որ



սահմանվեն խոշոր վթարների առաջացման վտանգները, և որ անհրաժեշտ առանձնահատկությունները հաշվի առնվեն թափոնների գործածության օբյեկտների նախագծման, կառուցման, աշխատանքի ու պահպանման ժամանակ, ինչպես նաև դրանք փակելիս ու փակումից հետո՝ այդպիսի վթարները կանխարգելելու և մարդու առողջության ու (կամ) շրջակա միջավայրի վրա դրանց բացասական հետևանքները, այդ թվում՝ անդրսահմանային ազդեցությունները սահմանափակելու համար:

3. 2-րդ պարբերության պահանջների նպատակներից ելնելով՝ յուրաքանչյուր օպերատոր, նախքան գործունեության մեկնարկը, արդյունահանման թափոնների կառավարման համար մշակում է խոշոր վթարների կանխարգելմանն ուղղված քաղաքականություն և գործողության մեջ դնում դրա իրականացումն ապահովող անվտանգ կառավարման համակարգ՝ I հավելվածի 1-ին բաժնով սահմանված տարրերին համապատասխան, ինչպես նաև իրականացնում է արտակարգ իրավիճակներին արձագանքման ներքին ծրագիր՝ նշելով այն միջոցները, որոնք վթարի դեպքում ձեռնարկվում են տարածքում:

Որպես այդ քաղաքականության մաս՝ օպերատորը նշանակում է անվտանգության հարցերով կառավարիչ, ով պատասխանատվություն է կրում խոշոր վթարների կանխարգելմանն ուղղված քաղաքականության իրականացման ու պարբերական վերահսկողության համար:

Իրավասու մարմինը կազմում է արտակարգ իրավիճակներին արձագանքման արտաքին ծրագիր՝ նշելով այն միջոցները, որոնք վթարի դեպքում ձեռնարկվում են տարածքի սահմաններից դուրս: Թույլտվության համար դիմումի հետ օպերատորը իրավասու մարմնին տրամադրում է անհրաժեշտ տեղեկություններ, որոնք վերջինիս այդ ծրագիրը մշակելու հնարավորություն կտան :

4. 3-րդ պարբերության մեջ նշված արտակարգ իրավիճակներին արձագանքման ծրագրերն ունեն հետևյալ նպատակները՝

ա) խոշոր վթարների և այլ միջադեպերի սահմանում ու հսկողություն՝ դրանց հետևանքները նվազեցնելու, մասնավորապես մարդու առողջությանը և շրջակա միջավայրին հասցվող վնասները սահմանափակելու համար.

բ) խոշոր վթարների և այլ դեպքերի ազդեցություններից մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների իրականացում.

գ) տվյալ տարածաշրջանում հանրությանը և համապատասխան ծառայություններին կամ մարմիններին անհրաժեշտ տեղեկությունների հաղորդում.

դ) խոշոր վթարներից հետո շրջակա միջավայրի վերականգնման ու մաքրման աշխատանքների նախատեսում:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ խոշոր վթարների դեպքում օպերատորն իրավասու մարմնին անհապաղ տրամադրի ամբողջ տեղեկատվությունը, որ պահանջվում է մարդու առողջության համար դրանց հետևանքները նվազեցնելու և բնապահպանական վնասի չափը գնահատելու ու փաստացի կամ հնարավորինս նվազեցնելու համար:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ շահագրգիռ հասարակությանն ընձեռնվեն 3-րդ պարբերությանը համապատասխան մշակման ենթակա արտակարգ իրավիճակներին արձագանքման արտաքին ծրագրի մշակման ու վերանայման գործընթացին մասնակցելու վաղ ու արդյունավետ հնարավորություններ: Այդ նպատակով, շահագրգիռ հասարակությունը տեղյակ է պահվում այդպիսի առաջարկի մասին, և նրանց տրամադրվում են համապատասխան տեղեկություններ, այդ թվում, մասնավորապես, տեղեկություններ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքի և այն իրավասու մարմինների մասին, որոնց կարող են ներկայացվել դիտողություններ ու հարցեր:

Անդամ պետություններն ապահովում են, որ շահագրգիռ հասարակությունն ունենա ողջամիտ ժամկետներում դիտողություններ ներկայացնելու իրավունք, և արտակարգ իրավիճակներին արձագանքման արտաքին ծրագրի մասին որոշում կայացնելիս պատշաճորեն հաշվի առնվեն այդ դիտողությունները:

6. Անդամ պետություններն ապահովում են, որ անվտանգության միջոցառումների և առնվազն I հավելվածի 2-րդ բաժնում թվարկված տարրերը պարունակող վթարների դեպքում պահանջվող գործողությունների մասին տեղեկություններն անվճար և բնականաբար տրամադրվեն շահագրգիռ հասարակությանը :

Այդ տեղեկատվությունը վերանայվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ և, անհրաժեշտության դեպքում, թարմացվում:

### *Հոդված 7*

#### **Դիմումը և թույլտվությունը**

1. Թափոնների գործածության օբյեկտի գործունեությունն առանց իրավասու մարմնի կողմից տրամադրված թույլտվության արգելված է: Թույլտվության մեջ ներառվում են սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված տարրերը և հստակորեն նշվում է թափոնների գործածության օբյեկտի կարգը՝ 9-րդ հոդվածում նշված չափորոշիչներին համապատասխան:

Սույն հոդվածի բոլոր պահանջների ապահովման դեպքում ազգային կամ Համայնքի այլ օրենսդրության համաձայն տրամադրվող ցանկացած թույլտվություն կարող է գուգակցվել՝ կազմելով մեկ համալիր թույլտվություն, եթե նման ձևաչափը կանխում է տեղեկատվության անհարկի կրկնօրինակումը և օպերատորի կամ իրավասու մարմնի կրկնակի աշխատանքը: 2-րդ պարբերությունում նշված տեղեկություններն ընդգրկվում են մեկ ընդհանուր կամ մի քանի թույլտվություններում՝ պայմանով, որ ապահովվեն սույն հոդվածով սահմանված բոլոր պահանջները:

2. Թույլտվության համար դիմումը պարունակում է առնվազն հետևյալ տեղեկությունները՝

ա) օպերատորի ինքնությունը.

բ) թափոնների գործածության օբյեկտի համար առաջարկվող վայրը, այդ թվում՝ հնարավոր այլընտրանքային վայրերը.

գ) թափոնների կառավարման ծրագիրը՝ համաձայն 5-րդ հոդվածի.

դ) համապատասխան միջոցառումները՝ ֆինանսական երաշխիքի կամ համարժեք միջոցների տեսքով, ինչպես պահանջվում է 14-րդ հոդվածով.

ե) օպերատորի կողմից տրամադրված տեղեկատվությունը 85/337/ԵՏՀ հրահանգի (19) 5-րդ հոդվածին համապատասխան, եթե համաձայն տվյալ հրահանգի, պահանջվում է բնապահպանական ազդեցության գնահատում.

3. Իրավասու մարմինը թույլտվություն տրամադրում է միայն, եթե համոզված է, որ՝

ա) օպերատորը կատարում է համապատասխան պահանջները՝ համաձայն սույն Հրահանգի.

բ) թափոնների կառավարումն ուղղակիորեն չի հակասում կամ այլ կերպ խոչընդոտում 75/442/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածում նշված թափոնների կառավարման համապատասխան ծրագրի կամ ծրագրերի իրականացումը:

4. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցները՝ իրավասու մարմինների կողմից թույլտվության տրամադրման պայմանների պարբերական վերանայումը, անհրաժեշտության դեպքում, դրանց թարմացումն ապահովելու համար՝
- եթե էական փոփոխություններ են տեղի ունենում թափոնների գործածության օբյեկտի գործունեության մեջ կամ կուտակված թափոններում.
  - 11(3) հոդվածի համաձայն՝ օպերատորի կողմից ներկայացված դիտանցման արդյունքների կամ 17-րդ հոդվածի համաձայն անցկացված տեսչական ստուգումների հիման վրա.
  - առկա լավագույն տեխնոլոգիաներում տեղի ունեցած էական փոփոխությունների մասին տեղեկությունների փոխանակման լույսի ներքո՝ համաձայն 21(3) հոդվածի:
5. Սույն հոդվածի համաձայն տրամադրված թույլտվության մեջ ներառված տեղեկատվությունը պետք է հասանելի լինի ազգային և Համայնքի վիճակագրական իրավասու մարմիններին՝ վիճակագրական նպատակներով պահանջի դեպքում: Բացառապես առևտրային բնույթի գաղտնի տեղեկատվությունը, օրինակ՝ բիզնես հարաբերություններին ու ծախսերի կազմին առնչվող տեղեկատվությունը և տնտեսական հանրային պահուստների ծավալը չպետք է հրապարակվի:

### *Հոդված 8*

#### **Հանրային մասնակցությունը**

1. Հանրությունը պաշտոնական ծանուցագրերով կամ համապատասխան այլ միջոցներով, առկայության դեպքում օրինակ՝ էլեկտրոնային կրիչով, պետք է տեղեկացվի հետևյալ խնդիրների մասին՝ նախքան թույլտվության տրամադրման ընթացակարգի մեկնարկը կամ ամենաուշը՝ տեղեկատվությունը պատշաճորեն ներկայացվելուց անմիջապես հետո՝
- ա) թույլտվության համար դիմում.
  - բ) կիրառելիության դեպքում, այն փաստը, որ թույլտվության համար դիմումին վերաբերող որոշումը կայացվում է անդամ պետությունների միջև խորհրդատվությունից հետո՝ 16-րդ հոդվածին համապատասխան.
  - գ) որոշման ընդունման համար պատասխանատու այն իրավասու մարմինների տվյալները, որոնցից կարելի է համապատասխան տեղեկություններ ստանալ, և որոնց կարելի է դիտողություններ կամ հարցեր ներկայացնել, ինչպես նաև դիտողություններ կամ հարցեր ներկայացնելու համար սահմանված ժամանակացույցի մանրամասները.
  - դ) հնարավոր որոշումների բնույթը.
  - ե) կիրառելիության դեպքում՝ տեղեկություններ թույլտվության կամ թույլտվության պայմանների թարմացման մասին առաջարկի առնչությամբ.
  - զ) հիշատակում ժամկետների և վայրերի կամ այն միջոցների մասին, որտեղ և որոնց միջոցով կապահովվի համապատասխան տեղեկատվության մատչելիությունը.
  - է) տեղեկություններ՝ սույն հոդվածի 7-րդ պարբերության համաձայն հանրային մասնակցությանն ուղղված միջոցառումների մասին:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ համապատասխան ժամկետներում շահագրգիռ հասարակության համար ապահովվի հետևյալի մատչելիությունը՝

ա) ազգային օրենսդրությանը համապատասխան՝ իրավասու մարմինն փոխանցված հիմնական հաշվետվությունները և նրանց տրված խորհրդատվությունն այն ժամանակահատվածում, երբ հանրությունը տեղեկացված էր՝ 1-ին պարբերությանը համապատասխան:

բ) «Շրջակա միջավայրի մասին տեղեկությունների հանրային մատչելիության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգի դրույթներին համապատասխան (8)՝ սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված տեղեկություններից բացի այլ տեղեկություններ, որոնք կարևոր են որոշման համար՝ համաձայն սույն Հրահանգի 7-րդ հոդվածի և, որոնք դառնում են մատչելի միայն այն ժամանակ, երբ հանրությունը տեղեկացվում է՝ սույն հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան:

3. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ սույն հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան՝ հանրությունը տեղեկացված լինի թույլտվության թարմացված պայմանների մասին՝ 7(4) հոդվածին համապատասխան:

4. Շահագրգիռ հասարակությունն իրավունք ունի դիտողություններ և կարծիքներ ներկայացնելու իրավասու մարմին՝ նախքան որոշում կայացնելը:

5. Սույն հոդվածի համաձայն անցկացված խորհրդատվությունների արդյունքները պետք է պատշաճորեն հաշվի առնվեն որոշում կայացնելիս:

6. Որոշում ընդունելուց հետո իրավասու մարմինը՝ համաձայն համապատասխան ընթացակարգերի, այդ մասին տեղեկացնում է շահագրգիռ հասարակությանը և տվյալ հասարակության համար մատչելի է դարձնում հետևյալ տեղեկությունները՝

ա) որոշման բովանդակությունը՝ ներառյալ թույլտվության օրինակը:

բ) այն պատճառներն ու դիտարկումները, որոնց վրա հիմնված է որոշումը:

7. Սույն հոդվածի համաձայն՝ հանրային մասնակցությանն ուղղված մանրամասն միջոցառումները որոշվում են անդամ պետության կողմից այնպես, որ շահագրգիռ հասարակությանը տրվի արդյունավետորեն նախապատրաստվելու և մասնակցելու հնարավորություն:

## *Հոդված 9*

### **Թափոնների գործածության օբյեկտների դասակարգման համակարգը**

Սույն Հրահանգի նպատակներից ելնելով՝ իրավասու մարմինները թափոնների գործածության օբյեկտները դասակարգում են որպես Ա դասին պատկանող օբյեկտներ՝ III հավելվածում նշված չափորոշիչներին համապատասխան:

## *Հոդված 10*

### **Ստորերկրյա խոռոչները**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ, երբ օպերատորը արդյունահանման թափոնները, որոնք կարող են առաջացած լինել մակերևութային կամ ստորգետնյա արդյունահանման միջոցով, կրկին տեղավորում է ստորերկրյա խոռոչներում՝ օգտակար նյութերի վերականգնման և շինարարական նպատակներով, ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ նպատակ ունենալով՝

1) ապահովելու արդյունահանման թափոնների կայունությունը՝ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո՝ 11(2) հոդվածին համապատասխան.

2) կանխարգելելու հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը՝ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո՝ 13(1), (3) և (5) հոդվածին համապատասխան.

3) ապահովելու արդյունահանման թափոնների և ստորերկրյա խոռոչի վերահսկողությունը՝ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո՝ 12(4) և (5) հոդվածին համապատասխան:

2. 1999/31/ԵՀ հրահանգը շարունակում է կիրառվել արդյունահանման թափոններից բացի այլ թափոնների նկատմամբ, որոնք, ըստ անհրաժեշտության, օգտագործվում են՝ ստորերկրյա խոռոչներ լցնելու համար:

### *Հոդված 11*

#### **Թափոնների գործածության օբյեկտների կառուցումն ու կառավարումը**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ թափոնների գործածության օբյեկտների կառավարումն իրականացվի իրավասու անձի կողմից և ապահովվի անձնակազմի տեխնիկական զարգացումն ու վերապատրաստումը:

2. Իրավասու մարմինը պետք է համոզված լինի, որ թափոնների գործածության նոր օբյեկտ կառուցելիս կամ գոյություն ունեցող օբյեկտը փոփոխության ենթարկելիս օպերատորն ապահովում է, որ

ա) թափոնների գործածության օբյեկտները տեղակայված լինեն համապատասխանաբար՝ հաշվի առնելով մասնավորապես, Համայնքի կամ ազգային պարտականությունները՝ կապված պաշտպանվող տարածքների և երկրաբանական, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, սեյսմիկ ու գեոտեխնիկական գործոնները և նախագծված լինի այնպես, որ կարճաժամկետ ու երկարաժամկետ հիմունքներով ապահովվեն անհրաժեշտ պայմաններ՝ կապված հողի, օդի, ստորգետնյա կամ մակերևութային ջրերի աղտոտումը կանխարգելելու հետ՝ հաշվի առնելով մասնավորապես 76/464/ԵՏՀ (21), 80/68/ԵՏՀ (22) և 2000/60/ԵՀ հրահանգների դրույթները և ապահովելով աղտոտված ջրի և թափոններից ծորացած կեղտաջրերի արդյունավետ հավաքումը, ինչպես և երբ պահանջվում է՝ թույլտվությամբ և նվազեցնելով ջրի կամ քամու հետևանքով առաջացող քայքայման ծավալը՝ այնքանով, որքանով դա հնարավոր է տեխնիկապես և նպատակահարմար՝ տնտեսապես.

բ) թափոնների գործածության օբյեկտը կառուցվի, կառավարվի և պահպանվի այնպես, որ ապահովվի դրա ֆիզիկական կայունությունը և կանխարգելվի հողի, օդի, մակերևութային կամ ստորգետնյա ջրերի աղտոտումը կամ կոնտամինացիան կարճաժամկետ և երկարաժամկետ հիմունքներով, ինչպես նաև հնարավորինս նվազեցվի լանդշաֆտին հասցվող վնասը.

գ) լինեն համապատասխան ծրագրեր և ձեռնարկվեն միջոցառումներ՝ իրավասու անձանց կողմից թափոնների գործածության օբյեկտների գործունեության դիտանցման և դրանցում տեսչական ստուգումների անցկացման, ինչպես նաև գործողությունների իրականացման մասով՝ անկայունության մասին վկայող արդյունքների կամ ջրի կամ հողի աղտոտման դեպքում.

դ) ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ հողատարածքի վերականգնման և թափոնների գործածության օբյեկտի փակման ուղղությամբ.

ե) ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ թափոնների գործածության օբյեկտի փակմանը հաջորդող փուլի առնչությամբ:

(զ) կետում նշված դիտանցման և տեսչական ստուգումների արձանագրությունները պահպանվում են թույլտվությանն առնչվող փաստաթղթերի հետ՝ ապահովելով տեղեկատվության փոխանցումը հատկապես օպերատորի փոփոխության դեպքում:

3. Օպերատորը պետք է առանց անհարկի ուշացման և ամեն դեպքում 48 ժամից ոչ ուշ ծանուցի իրավասու մարմնին ցանկացած միջադեպի մասին, որ կարող է ազդեցություն ունենալ թափոնների գործածության օբյեկտի գործունեության կայունության վրա, ինչպես նաև թափոնների գործածության օբյեկտում անցկացված ստուգումների և դիտանցման ընթացակարգերի հետևանքով բացահայտված բնապահպանական զգալի վնասների մասին: Օպերատորը, կիրառելիության դեպքում, իրականացնում է արտակարգ իրավիճակներին արձագանքման ներքին ծրագիր և հետևում իրավասու մարմնի ցանկացած այլ հրահանգի՝ կապված ուղղիչ միջոցներ ձեռնարկելու հետ:

Օպերատորը կրում է ձեռնարկվելիք միջոցների ծախսերը:

Իրավասու մարմնի կողմից սահմանվող հաճախականությամբ, ամեն դեպքում սակայն տարին մեկ անգամ, օպերատորը, ընդհանուր տվյալների հիման վրա, իրավասու մարմիններին զեկուցում է դիտանցման արդյունքների մասին՝ նպատակ ունենալով ցույց տալ, որ ապահովված են թույլտվության պայմանները և բարձրացնել թափոնների մասին և թափոնների գործածության օբյեկտներում վարվելակերպի կանոնների մասին տեղեկացվածության մակարդակը: Այդ զեկույցի հիման վրա իրավասու մարմինը կարող է որոշել, որ անկախ փորձագետի կողմից անհրաժեշտ է հաստատում :

## *Հոդված 12*

### **Թափոնների գործածության օբյեկտների փակման և փակումից հետո կիրառվող ընթացակարգերը**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են 2–5–րդ պարբերությունների դրույթների հետ համապատասխանությունն ապահովելուն ուղղված միջոցներ:

2. Թափոնների գործածության օբյեկտում փակման ընթացակարգը մեկնարկում է միայն, եթե կատարվում է հետևյալ պայմաններից մեկը՝

ա) բավարարված են թույլտվության մեջ նշված համապատասխան պայմանները.

բ) իրավասու մարմնի կողմից թույլտվություն է տրամադրված՝ օպերատորի դիմումի համաձայն.

գ) իրավասու մարմինն այդ նպատակով հիմնավորված որոշում է կայացնում:

3. Թափոնների գործածության օբյեկտը կարող է համարվել վերջնականապես փակված միայն այն բանից հետո, երբ իրավասու մարմինն առանց անհարկի ուշացման տեղում անցկացնում է վերջնական ստուգումներ, գնահատում է օպերատորի կողմից ներկայացված բոլոր հաշվետվությունները, հաստատում է, որ թափոնների գործածության օբյեկտի գործունեության արդյունքում վնասված հողատարածքը վերականգնվել է, և փոխանցում է փակման մասին իր հաստատումը օպերատորին:

Այդ հաստատումը ոչ մի դեպքում չի նվազեցնում օպերատորի պարտավորությունները՝ սահմանված թույլտվության համար ներկայացվող պայմաններով կամ այլ կերպ՝ օրենքով:

4. Օպերատորը պատասխանատու է փակմանը հաջորդող փուլում պահպանման, դիտանցման, հսկողության և ուղղիչ միջոցների իրականացման համար՝ այնքանով, որքանով կարող է պահանջվել իրավասու մարմնի կողմից՝ հաշվի առնելով վնասի բնույթը և տևողությունը, բացառությամբ, երբ իրավասու մարմինը որոշում է հանձն առնել այդ խնդիրները օպերատորի փոխարեն՝ թափոնների գործածության օբյեկտի վերջնական փակումից հետո և չհակասելով թափոնների սեփականատերի պատասխանատվությունը կարգավորող ցանկացած ազգային կամ Համայնքի օրենսդրության դրույթներին:

5. Եթե անհրաժեշտ է համարվում իրավասու մարմնի կողմից, թափոնների գործածության օբյեկտի փակումից հետո՝ Համայնքի օրենսդրությամբ՝ մասնավորապես 76/464/ԵՏՀ, 80/68/ԵՏՀ և 2000/60/ԵՀ հրահանգներով սահմանված բնապահպանական պահանջները բավարարելու համար օպերատորը պետք է վերահսկի հատկապես օբյեկտի ֆիզիկական ու քիմիական կայունությունը և նվազեցնի ցանկացած բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա՝ մասնավորապես մակերևութային և ստորգետնյա ջրերի առումով՝ ապահովելով, որ՝

ա) օբյեկտին հարող բոլոր շինությունները դիտանցվեն ու պահպանվեն գործածության համար միշտ պատրաստ հսկիչ և չափման սարքերի հետ.

բ) կիրառելիության դեպքում՝ հեղեղատարների հունները և ջրաթող պարապները լինեն մաքուր և ազատ:

6. Թափոնների գործածության օբյեկտի փակումից հետո օպերատորը պետք է առանց անհարկի ուշացման, ծանուցի իրավասու մարմնին բոլոր միջադեպերի կամ զարգացումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ թափոնների գործածության օբյեկտի գործունեության կայունության վրա, ինչպես նաև համապատասխան ստուգումների և դիտանցման ընթացակարգերի հետևանքով բացահայտված բնապահպանական զգալի վնասների մասին: Օպերատորը, կիրառելիության դեպքում, իրականացնում է արտակարգ իրավիճակներին արձագանքման ներքին ծրագիր և հետևում իրավասու մարմնի ցանկացած այլ հրահանգի՝ կապված ուղղիչ միջոցներ ձեռնարկելու հետ:

Օպերատորը կրում է ձեռնարկվելիք միջոցների ծախսերը:

Իրավասու մարմնի կողմից սահմանվող դեպքերում և հաճախականությամբ օպերատորը, ընդհանուր տվյալների հիման վրա, իրավասու մարմիններին զեկուցում է դիտանցման արդյունքների մասին՝ նպատակ ունենալով ցույց տալ, որ ապահովված են թույլտվության պայմանները և բարձրացնել թափոնների մասին ու թափոնների գործածության օբյեկտներում վարվելակերպի կանոնների մասին տեղեկացվածության մակարդակը:

### *Հոդված 13*

#### **Ջրի որակի վատթարացման, օդի և հողի աղտոտման կանխարգելումը**

1. Իրավասու մարմինը պետք է համոզված լինի, որ օպերատորը ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ՝ Համայնքի բնապահպանական չափանիշները բավարարելու և հատկապես 2000/60/ԵՀ հրահանգին համապատասխան՝ ջրի ներկայիս որակի վատթարացումը կանխելու համար՝ մասնավորապես՝

ա) գնահատելով հեռացված թափոններից ծորացած կեղտաջրերի գոյացման հնարավորությունը, այդ թվում՝ այդ հեղուկում աղտոտված նյութերի պարունակությունը՝ թափոնների գործածության օբյեկտի շահագործման ընթացքում և դրա փակումից հետո ու որոշելով թափոնների գործածության օբյեկտի ջրային բալանսը.

բ) կանխելով կամ նվազեցնելով թափոններից ծորացած կեղտաջրերի գոյացումը և մակերևութային կամ ստորգետնյա ջրերի ու հողի աղտոտումը թափոններից.

գ) հավաքելով թափոնների գործածության օբյեկտից գոյացող աղտոտված ջրերն ու թափոններից ծորացած կեղտաջրերը և մշակելով դրանք՝ բացթողման համար պահանջվող չափանիշներին համապատասխան:

2. Իրավասու մարմինը պետք է ապահովի, որ օպերատորը ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ փոշու ու գազի արտանետումները կանխարգելելու կամ դրանց ծավալը նվազեցնելու համար:

3. Եթե, բնապահպանական վտանգների գնահատման հիման վրա և կիրառելիության դեպքում հաշվի առնելով մասնավորապես 76/464/ԵՏՀ, 80/68/ԵՏՀ կամ 2000/60/ԵՀ հրահանգները, իրավասու մարմինը որոշում է, որ թափոններից ծորացած կեղտաջրերի հավաքումն ու մշակումն անհրաժեշտ չէ, կամ հաստատվել է, որ թափոնների գործածության օբյեկտը վտանգ չի ներկայացնում հողի, ստորգետնյա կամ մակերևութային ջրերի համար, 1-ին պարբերության (բ) և (գ) կետերով սահմանված պահանջները կարող են համապատասխանաբար մեղմացվել կամ չկիրառվել:

4. Անդամ պետությունները պինդ, կիսահեղուկ կամ հեղուկ վիճակում արդյունահանման թափոնների հեռացումն իրականացնում են ջրընդունիչ կառույցներում, բացառությամբ արդյունահանման թափոնների հեռացման նպատակով կառուցված օբյեկտների, պայմանով, որ օպերատորը բավարարել է 76/464/ԵՏՀ, 80/68/ԵՏՀ և 2000/60/ԵՀ հրահանգների համապատասխան պահանջները:

5. Երբ ստորերկրյա խոռոչներ են վերադարձվում մակերևութային կամ ստորգետնյա արդյունահանման հետևանքով գոյացած թափոնները, որոնց հոսքը փակումից հետո թույլատրվում է, օպերատորը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ջրի որակի վատթարացումը և հողի աղտոտումը կանխարգելելու կամ դրա ծավալը նվազեցնելու համար՝ համապատասխան փոփոխություններ մտցնելուց հետո՝ (1) և (3) պարբերություններին համապատասխան:

Օպերատորն իրավասու մարմնին տրամադրում է Համայնքի կողմից, մասնավորապես 2000/60/ԵՀ հրահանգով սահմանված պարտականությունների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկություններ:

6. Ցիանիդի առկայությամբ ջրամբարների դեպքում օպերատորն ապահովում է, որ թույլ թթվում դիսոցվող ցիանիդի կոնցենտրացիան ջրամբարներում հասցվի հնարավորինս ցածր մակարդակի՝ օգտագործելով առկա լավագույն տեխնոլոգիաները, իսկ նախկինում թույլտվություն ստացած կամ 2008 թվականի մայիսի 1-ին արդեն շահագործված թափոնների գործածության օբյեկտներում՝ մշակման կայանից դեպի ջրամբար պոչանքների արտանետման պահին թույլ թթվում դիսոցվող ցիանիդի կոնցենտրացիան 2008 թվականի մայիսի 1-ի դրությամբ չգերազանցի 50 միլիոներորդ մասը, 2013 թվականի մայիսի 1-ի դրությամբ՝ 25 միլիոներորդ մասը, 2018 թվականի մայիսի 1-ի դրությամբ՝ 10 միլիոներորդ մասը և թափոնների գործածության այն օբյեկտների դեպքում, որոնք թույլտվություն են ստացել 2008 թվականի մայիսի 1-ից հետո՝ 10 միլիոներորդ մասը:

Իրավասու մարմնի կողմից այդպիսի պահանջ ստանալու դեպքում օպերատորը, տարածքին հատուկ պայմաններից ելնելով, կատարված վտանգների գնահատման միջոցով ցույց է տալիս, որ կոնցենտրացիայի նկատմամբ կիրառվող սահմանները կարող են այլևս չիջեցվել ավելի ցածր մակարդակի:



## Հոդված 14

### Ֆինանսական երաշխիքը

1. Իրավասու մարմինը նախքան թափոնների գործածության օբյեկտում արդյունահանման թափոնների կուտակմանը կամ հեռացմանն առնչվող աշխատանքների մեկնարկը պահանջում է ֆինանսական (օրինակ՝ դրամական ավանդի տեսքով՝ ներառյալ ընկերությունների կողմից ֆինանսավորվող երաշխիքային դրամագլուխները) կամ դրան համարժեք երաշխիք՝ անդամ պետությունների կողմից որոշման ենթակա ընթացակարգերին համապատասխան, որպեսզի՝

ա) սույն Հրահանգի համաձայն տրամադրված թույլտվությամբ սահմանված բոլոր պարտականությունները, այդ թվում փակումից հետո կիրառվող դրույթները կատարվեն:

բ) լինեն դրամական միջոցներ, որոնք ցանկացած պահի հասանելի կլինեն թափոնների գործածության օբյեկտի գործունեության արդյունքում վնասված հողատարածքի վերականգնման համար, ինչպես նկարագրված է 5-րդ հոդվածի համաձայն կազմված և 7-րդ հոդվածով նախատեսված թույլտվությամբ պահանջված թափոնների կառավարման ծրագրում:

2. 1-ին պարբերությունում նշված երաշխիքի հաշվարկը կատարվում է հետևյալ գործոնների հիման վրա՝

ա) թափոնների գործածության օբյեկտի հնարավոր բնապահպանական ազդեցությունը՝ հաշվի առնելով մասնավորապես թափոնների գործածության օբյեկտի կարգը, թափոնների առանձնահատկությունները և վերականգնված հողատարածքի գործածությունն ապագայում:

բ) ենթադրություն, որ անկախ և համապատասխան որակավորում ունեցող անձինք կգնահատեն և կիրականացնեն անհրաժեշտ վերականգնողական աշխատանք:

3. Երաշխիքի չափը պարբերաբար փոփոխվում է՝ թափոնների գործածության օբյեկտի գործունեության հետևանքով վնասված հողատարածքում իրականացվող անհրաժեշտ վերականգնողական աշխատանքներին համապատասխան, ինչպես նկարագրված է 5-րդ հոդվածի համաձայն կազմված և 7-րդ հոդվածով նախատեսված թույլտվությամբ պահանջված թափոնների կառավարման ծրագրում:

4. Եթե իրավասու մարմինը, 12(3) հոդվածին համապատասխան, հաստատում է փակումը, ապա նա օպերատորին գրավոր հայտարարություն է ներկայացնում՝ նրան սույն Հոդվածի 1-ին պարբերությունում նշված երաշխիքի տրամադրման պարտավորությունից, բացառությամբ 12(4) հոդվածում նշված փակումից հետո կիրառվող պարտավորություններից ազատելու մասին:

## Հոդված 15

### Բնապահպանական պատասխանատվությունը

2004/35/ԵՇ հրահանգի III հավելվածը լրացնել հետևյալ կետով՝

«13. Արդյունահանման թափոնների կառավարումը «Արդյունահանող արդյունաբերությունում գոյացող թափոնների կառավարման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՇ հրահանգի համաձայն (23 )»:

## Հոդված 16

### Անդրսահմանային ազդեցությունները

1. Եթե այն անդամ պետությանը, որտեղ տեղակայված է թափոնների գործածության օբյեկտ, հայտնի է, որ Ա դասին պատկանող թափոնների գործածության օբյեկտի աշխատանքը կարող է զգալի վնաս պատճառել մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրին կամ սպառնալ մարդու առողջությանը, կամ եթե որևէ անդամ պետություն, որը կարող է էական ազդեցություններ կրել, նման պահանջ է ներկայացնում այն անդամ պետությունը, որի տարածքում, 7-րդ հոդվածի համաձայն, ներկայացվել է թույլտվություն ստանալու մասին դիմում, 7-րդ հոդվածի համաձայն տրամադրված տեղեկությունը նույն ժամանակահատվածում հաղորդում է մյուս անդամ պետությանն այն ժամանակ, երբ այդ տեղեկությունը մատչելի է դարձվում տվյալ անդամ պետության քաղաքացիներին:

Նման տեղեկությունները հիմք են ծառայում երկու երկրի միջև երկկողմ հարաբերությունների համատեքստում փոխադարձության և համարժեքության հիման վրա անհրաժեշտ ցանկացած խորհրդակցության համար:

2. Երկկողմ հարաբերությունների շրջանակում անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին պարբերության մեջ նշված դեպքերում դիմումները համապատասխան ժամկետներով մատչելի լինեն ազդեցության ենթարկվող անդամ պետության շահագրգիռ հասարակությանը, որպեսզի հասարակության համապատասխան խմբերը իրավասու մարմնի կողմից որոշման ընդունումից առաջ իրենց դիտողությունները հայտնելու իրավունք ունենան:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված թափոնների գործածության օբյեկտում տեղի ունեցած վթարի դեպքում՝ 6(4) հոդվածի համաձայն օպերատորի կողմից իրավասու մարմնին տրամադրված տեղեկատվությունն անհապաղ հաղորդվի մյուս անդամ պետությանը, որպեսզի այն օգնի նվազեցնել մարդու առողջության վրա վթարի հետևանքները և գնահատի ու նվազեցնի փաստացի կամ հնարավոր բնապահպանական վնասի չափը:

## Հոդված 17

### Իրավասու մարմնի կողմից անցկացվող տեսչական ստուգումները

1. Նախքան հեռացման աշխատանքների մեկնարկը և դրանից հետո տվյալ անդամ պետության կողմից որոշվող կանոնավոր ընդմիջումներով, այդ թվում՝ օբյեկտի փակմանը հաջորդող փուլում, իրավասու մարմինը տեսչական ստուգում է անցկացնում 7-րդ հոդվածով կարգավորվող թափոնների գործածության օբյեկտում՝ թույլտվության համապատասխան պայմանների կատարումն ապահովելու համար: Դրական արդյունքը ոչ մի դեպքում չի մեղմացնում թույլտվության պայմաններով սահմանված՝ օպերատորի պատասխանատվությունը:

2. Անդամ պետությունները պահանջում են, որ օպերատորը թարմացված պահի թափոնների կառավարման աշխատանքների մասին փաստաթղթերում պարունակվող տվյալները և տրամադրի դրանք իրավասու մարմնին՝ տեսչական ստուգումներ անցկացնելու համար, ինչպես նաև՝ ապահովի թափոնների գործածության օբյեկտին առնչվող համապատասխան թարմ տեղեկությունների և փաստաթղթերի պատշաճ փոխանցումը՝ թափոնների գործածության օբյեկտի կառավարման ընթացքում օպերատորի փոփոխության դեպքում:

## *Հոդված 18*

### **Զեկույցը ներկայացնելու պարտականությունը**

1. Անդամ պետությունները յուրաքանչյուր երեք տարին մեկ սույն Հրահանգի կիրարկման մասին զեկույց են ներկայացնում Հանձնաժողով: Զեկույցը կազմվում է Հանձնաժողովի կողմից ընդունման ենթակա հարցաշարի կամ համառոտ նկարագրի հիման վրա՝ 23(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան: Զեկույցը փոխանցվում է Հանձնաժողովին՝ զեկույցում նշված եռամյա ժամկետի ավարտից հետո ինն ամսվա ընթացքում:

Հանձնաժողովը սույն Հրահանգի կիրարկման մասին զեկույցը հրապարակում է՝ անդամ պետություններից զեկույցներն ստանալուց հետո ինն ամսվա ընթացքում:

2. Ամեն տարի անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկություններ են տրամադրում օպերատորների կողմից ծանուցված միջադեպերի մասին՝ 11(3) և 12(6) հոդվածներին համապատասխան: Հանձնաժողովն այդ տեղեկությունները մատչելի է դարձնում այլ անդամ պետությունների համար՝ հարցման դեպքում: Չհակասելով բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիության մասին Համայնքի իրավունքին՝ անդամ պետությունները, հարցման դեպքում, իրենց հերթին ապահովում են տեղեկությունների մատչելիությունը շահագրգիռ հասարակության անդամների համար:

## *Հոդված 19*

### **Պատժամիջոցները**

Անդամ պետությունները սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային իրավունքի դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոններ են սահմանում և ձեռնարկում են բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ դրանց կիրառումն ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ:

## *Հոդված 20*

### **Թափոնների գործածության փակ օբյեկտների գույքագրումը**

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրենց տարածքում տեղակայված թափոնների գործածության փակ օբյեկտներում, այդ թվում՝ լքված օբյեկտներում, որոնք լուրջ բացասական հետևանքներ են ունենում շրջակա միջավայրի վրա, կամ միջնաժամկետում կամ կարճաժամկետում կարող են լուրջ վտանգ ներկայացնել մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար, իրականացվի գույքագրում և պարբերաբար թարմացվի: Այդ գույքագրումը, որի արդյունքները պետք է հասանելի դարձվեն հասարակության համար, իրականացվում է մինչև 2012 թվականի մայիսի 1-ը՝ առկայության դեպքում հաշվի առնելով 21-րդ հոդվածում նշված մեթոդաբանությունները:

## *Հոդված 21*

### **Տեղեկատվության փոխանակումը**

1. 23-րդ հոդվածում նշված Կոմիտեի կողմից աջակցություն ստացող Հանձնաժողովն ապահովում է անդամ պետությունների միջև տեխնիկական ու գիտական տեղեկությունների համապատասխան փոխանակումը՝ նպատակ ունենալով զարգացնելու այն մեթոդաբանությունները, որոնք առնչվում են հետևյալի հետ՝

ա) 20-րդ հոդվածի դրույթների կիրարկում.

բ) 20-րդ հոդվածով սահմանված թափոնների գործածության փակ օբյեկտների վերականգնում՝ 4-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար: Այդ մեթոդաբանությունները պետք է թույլ տան սահմանել վտանգի գնահատման ամենապատակահարմար ընթացակարգերը և վնասի վերացման գործողությունները՝ հաշվի առնելով երկրաբանական, հիդրոերկրաբանական և կլիմայաբանական առանձնահատկությունների բազմազանությունն ամբողջ Եվրոպայում:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը հետևի առկա լավագույն տեխնոլոգիաների զարգացումներին կամ տեղեկացվի դրանց մասին:

3. Հանձնաժողովը կազմակերպում է անդամ պետությունների և համապատասխան կազմակերպությունների միջև տեղեկատվության փոխանակում առկա լավագույն տեխնոլոգիաների, դրանց դիտանցման և զարգացումների մասին: Հանձնաժողովը հրապարակում է տեղեկատվության փոխանակման արդյունքները:

## *Հոդված 22*

1. Հանձնաժողովը, 23(2) հոդվածով նախատեսված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան, ընդունում է հետևյալը՝

ա) 7(5) և 12(6) հոդվածներում նշված ներդաշնակեցման ու տեղեկատվության կանոնավոր փոխանակման համար անհրաժեշտ դրույթները.

բ) ֆինանսական երաշխիքի սահմանման համար տեխնիկական ուղեցույցներ՝ 14(2) հոդվածի պահանջներին համապատասխան.

գ) տեսչական ստուգումների համար տեխնիկական ուղեցույցներ՝ 17-րդ հոդվածին համապատասխան:

2. Հանձնաժողովը սահմանում է դրույթներ հետևյալի համար՝ առաջնահերթություն տալով (բ), (գ) և (դ) կետերին՝

ա) 13(6) հոդվածի կիրարկում, այդ թվում՝ թույլ թթվում դիսոցվող ցիանիդի սահմանմանն ու դրա չափման մեթոդին վերաբերող տեխնիկական պայմանների ապահովում.

բ) II հավելվածում նշված թափոնների բնութագրմանը ներկայացվող տեխնիկական պահանջների կատարում.

գ) 3(3) հոդվածում նշված սահմանման մեկնաբանություն.

դ) թափոնների գործածության օբյեկտների դասակարգման համար կիրառվող չափորոշիչների սահմանում՝ III հավելվածին համապատասխան.

ե) սույն Հրահանգի տեխնիկական կիրարկման համար անհրաժեշտ նմուշառման ու անալիզի մեթոդների համար ներդաշնակեցված չափանիշների սահմանում:

Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 23(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություններ առող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

3. Հանձնաժողովն անհրաժեշտ փոփոխություններ է կատարում հավելվածներում՝ դրանք գիտական և տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու նպատակով: Այդ

փոփոխությունները կատարվում են շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար:

Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն 23(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությունն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

### *Հոդված 23*

#### **Կոմիտեն**

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 75/442/ԵՏՀ հրահանգի 18-րդ հոդվածի համաձայն ստեղծված կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե):
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:
- Թիվ 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:
3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

### *Հոդված 24*

#### **Անցումային դրույթ**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ թափոնների գործածության օբյեկտը, որին տրվել է թույլտվություն, կամ որը գործում է դեռ 2008 թվականի մայիսի 1-ից, համապատասխանի սույն Հրահանգի դրույթներին մինչև 2012 թվականի մայիսի 1-ը՝ բացառությամբ 14(1) հոդվածով սահմանված դրույթների, որոնց համապատասխանությունը պետք է ապահովվի մինչև 2014 թվականի մայիսի 1-ը և 13(6) հոդվածում նշված դրույթների, որոնց համապատասխանությունը պետք է ապահովվի՝ դրանով սահմանված ժամանակացույցին համապատասխան:
2. 1-ին պարբերությունը չի կիրառվում մինչև 2008 թվականի մայիսի 1-ը փակված թափոնների գործածության օբյեկտների նկատմամբ:
3. Անդամ պետություններն ապահովում են, որ 2006 թվականի մայիսի 1-ից սկսած և անկախ այն հանգամանքից, որ թափոնների գործածության օբյեկտը փակվում է այդ ամսաթվից հետո և, նախքան 2008 թվականի մայիսի 1-ը, արդյունահանման թափոնների կառավարումն իրականացվի այնպես, որ չսահմանափակվի սույն Հրահանգի 4(1) հոդվածի դրույթների ու Համայնքի օրենսդրությամբ սահմանված կիրառելի այլ բնապահպանական պահանջների, ներառյալ 2000/60/ԵՀ հրահանգի դրույթների կատարումը:
4. 5-րդ, 6(3)-(5), 7-րդ, 8-րդ, 12(1) և (2) և 14(1)-(3) հոդվածները կիրառվում են թափոնների գործածության այն օբյեկտների նկատմամբ, որոնք՝
  - դադարեցրել են թափոնների ընդունումը մինչև 2006 թվականի մայիսի 1-ը.
  - իրականացնում են փակման ընթացակարգերը՝ Համայնքի կամ ազգային կիրառելի օրենսդրությանը կամ իրավասու մարմնի կողմից հաստատված ծրագրերին համապատասխան, և

— ըստ էության կփակվեն մինչև 2010 թվականի դեկտեմբերի 10-ը:

Անդամ պետություններն այդպիսի միջադեպերի մասին ծանուցում են Հանձնաժողովին մինչև 2008 թվականի օգոստոսի 1-ը և ապահովում, որ այդ օբյեկտների կառավարումն իրականացվի այնպես, որ չսահմանափակվի սույն Հրահանգի նպատակների, մասնավորապես 4(1) հոդվածով սահմանված նպատակների, ինչպես նաև Համայնքի այլ օրենսդրության, այդ թվում՝ 2000/60/ԵՀ հրահանգի նպատակների իրականացումը:

#### *Հոդված 25*

##### **Փոխատեղումը**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, կանոնակարգեր և վարչական ակտեր՝ նախքան 2008 թվականի մայիսի 1-ը: Նրանք անմիջապես այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

#### *Հոդված 26*

##### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

#### *Հոդված 27*

##### **Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

---

**Խոշոր վթարների կանխարգելման քաղաքականությունը և շահագրգիռ հասարակությանը հաղորդման ենթակա տեղեկատվությունը**

**1. Խոշոր վթարների կանխարգելման քաղաքականությունը**

Օպերատորի կողմից մշակված խոշոր վթարների կանխարգելման քաղաքականությունը և անվտանգության կառավարման համակարգը պետք է համաչափ լինի թափոնների գործածության օբյեկտների կողմից ներկայացված խոշոր վթարների առաջացման վտանգներին: Դրանց իրականացման նպատակով պետք է հաշվի առնվեն հետևյալ տարրերը

1) խոշոր վթարների կանխարգելման քաղաքականությունը պետք է ներառի օպերատորի գործունեության ընդհանուր նպատակները և սկզբունքները՝ կապված խոշոր վթարների առաջացման վտանգների հսկողության հետ:

2) անվտանգության կառավարման համակարգը պետք է ներառի ընդհանուր կառավարման համակարգի այն մասը, որն ընդգրկում է կազմակերպական կառուցվածքը, պարտականությունները, գործելակերպերը, ընթացակարգերը, գործընթացները և ռեսուրսները՝ խոշոր վթարների կանխարգելման քաղաքականության սահմանման ու իրականացման համար:

3) հետևյալ հարցերը լուծվում են անվտանգության կառավարման համակարգում՝

ա) կազմակերպություն և աշխատակազմ՝ կազմակերպության բոլոր մակարդակներում խոշոր վթարների կառավարման հարցերով զբաղվող անձնակազմի գործառույթներն ու պարտականությունները, այդ անձնակազմի համար անհրաժեշտ վերապատրաստման դասընթացների սահմանում և սահմանված դասընթացների անցկացում, ինչպես նաև աշխատակիցների ու անհրաժեշտության դեպքում, ենթակապալառուների ներգրավում:

բ) խոշոր վթարների սահմանում և գնահատում՝ բնականոն և ոչ բնականոն գործունեության հետևանքով առաջացող խոշոր վթարների պարբերական սահմանման ընթացակարգերի ընդունում և իրականացում, ինչպես նաև դրանց հավանականության ու ծանրության աստիճանի գնահատում:

գ) գործունեության հսկողություն՝ ընթացակարգերի ու հրահանգների ընդունում և իրականացում՝ անվտանգ աշխատանքի այդ թվում՝ կայանի շահագործման, գործընթացների, սարքավորումների և աշխատանքի ժամանակավոր դադարների մասով:

դ) փոփոխության կառավարում՝ նախագծման հետ կապված փոփոխությունների ընդունում և իրականացում կամ թափոնների գործածության օբյեկտների նախագծում:

ե) արտակարգ իրավիճակներին առնչվող ծրագրերի կազմում՝ պարբերաբար իրականացվող վերլուծության միջոցով կանխատեսելի արտակարգ իրավիճակների սահմանման և այդպիսի արտակարգ իրավիճակներին դիմակայելուն ուղղված արտակարգ իրավիճակներին արձագանքման ծրագրերի մշակման, փորձարկման ու վերանայման ընթացակարգերի ընդունում և իրականացում:

զ) դիտանցման իրականացում՝ ընթացակարգերի ընդունում և իրականացում՝ կապված օպերատորի կողմից մշակված խոշոր վթարների կանխարգելման քաղաքականությամբ և անվտանգության կառավարման համակարգով սահմանված նպատակների իրականացման ընթացիկ գնահատման հետ, ինչպես նաև քննության և ուղղիչ գործողությունների ձեռնարկման մեխանիզմները՝ դրանք չիրականացնելու դեպքում: Ընթացակարգերը կարգավորում են խոշոր վթարների կամ վթարի նախադրյալների, մասնավորապես

պաշտպանական միջոցների բացակայության հետևանքով առաջացող խոշոր վթարների կամ վթարի նախադրյալների մասին գեկուցման մասով օպերատորի կողմից կիրառվող համակարգը, ինչպես նաև դրանց հետաքննությունն ու հետևողականությունը՝ նախկինում ձեռք բերած փորձի հիման վրա.

է) աուդիտ ու վերանայում՝ խոշոր վթարների կանխարգելման քաղաքականության և անվտանգության կառավարման համակարգի արդյունավետության ու համապատասխանության պարբերական գնահատմանն ուղղված ընթացակարգերի ընդունում ու իրականացում. քաղաքականության ու անվտանգության կառավարման համակարգի արդյունավետության փաստաթղթավորված վերանայում և դրա թարմացում դեկավար մարմնի կողմից:

## **2. Շահագրգիռ հասարակությանը հաղորդման ենթակա տեղեկատվությունը**

- 1) Օպերատորի անունը և թափոնների գործածության օբյեկտի հասցեն:
- 2) Տեղեկություններ տրամադրող անձի ինքնության հաստատումը՝ ըստ նրա զբաղեցրած պաշտոնի:
- 3) Հաստատում այն մասին, որ թափոնների գործածության օբյեկտը համապատասխանում է սույն Հրահանգն իրականացնող կանոնակարգերին և (կամ) վարչական ակտերին, և որ կիրառելիության դեպքում, 6(2) հոդվածում նշված տարրերին առնչվող տեղեկատվությունը ներկայացվել է իրավասու մարմին:
- 4) Տարածքում իրականացվող աշխատանքի կամ աշխատանքների պարզ ու հստակ բացատրություն:
- 5) Թափոնների գործածության օբյեկտում կիրառվող նյութերի և պատրաստուկների ընդունված անվանումները կամ համընդհանուր օգտագործման (ջեներիկ) անվանումները, ինչպես նաև այն թափոնները, որոնք կարող են առաջացնել խոշոր վթարներ, նշելով դրանց հիմնական վտանգավոր հատկությունները:
- 6) Խոշոր վթարների առաջացման վտանգների բնույթին, այդ թվում՝ շրջակայքի բնակչության և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններին առնչվող ընդհանուր տեղեկատվություն:
- 7) Համապատասխան տեղեկատվություն այն մասին, թե շրջակայքի շահագրգիռ բնակչությունն ինչպես պետք է տեղեկացվի և տեղեկացված պահվի՝ խոշոր վթարի դեպքում:
- 8) Համապատասխան տեղեկատվություն այն մասին, թե շահագրգիռ բնակչությունն ինչ միջոցներ պետք է ձեռնարկի և ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորի խոշոր վթարի դեպքում:
- 9) Հաստատում այն մասին, որ օպերատորից պահանջվում է համապատասխան միջոցառումներ իրականացնել տարածքում՝ համագործակցելով մասնավորապես արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ՝ խոշոր վթարներին առնչվող հարցերով զբաղվելու և դրանց ազդեցությունները նվազեցնելու համար:
- 10) Հղում միջադեպի հետևանքով կողմնակի ազդեցությունների կարգավորմանն ուղղված արտակարգ իրավիճակներին արձագանքման արտաքին ծրագրին: Խորհուրդ է տրվում միջադեպերի դեպքում համագործակցել նաև արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ՝ հետևելով նրանց ցուցումներին կամ պահանջներին:



11) Տեղեկություններ այն մասին, թե որտեղից կարելի է ստանալ առավել մանրամասն համապատասխան տեղեկատվություն՝ համաձայն ազգային օրենսդրությամբ սահմանված գաղտնիության պայմաններին:

---

## ՀԱՎԵԼՎԱԾ II

### Թափոնների բնութագրումը

Օբյեկտում կուտակվող թափոնների բնութագրումը կատարվում է այնպես, որ երաշխավորվի օբյեկտի կառուցվածքի ֆիզիկական ու քիմիական երկարաժամկետ կայունությունը և կանխարգելվեն խոշոր վթարները: Թափոնների բնութագրումը ներառում է, հարկ եղած դեպքում և թափոնների գործածության օբյեկտի կարգին համապատասխան, հետևյալ հայեցակետերը՝

- 1) կարճաժամկետ ու երկարաժամկետ հիմունքներով կուտակվող թափոնների սպասվող ֆիզիկական ու քիմիական հատկանիշների նկարագրությունը՝ նշելով հատկապես դրա կայունությունը մակերևույթի մթնոլորտային (կլիմայաբանական) պայմաններում՝ հաշվի առնելով արդյունահանման ենթակա հանքանյութի կամ հանքանյութերի տեսակը և արդյունահանման աշխատանքների ընթացքում տեղաշարժվող ծածկաշերտի և (կամ) երակային հանքանյութի բնույթը.
- 2) թափոնների դասակարգումը՝ ըստ 2000/532/ԵՀ որոշման (24) մեջ կատարված համապատասխան նշումի՝ հատկապես հաշվի առնելով դրա վտանգավոր հատկանիշները.
- 3) հանքային ռեսուրսների մշակման ընթացքում օգտագործվող քիմիական նյութերի նկարագիրը և դրանց կայունությունը.
- 4) հեռացման մեթոդի նկարագրությունը.
- 5) թափոնների փոխադրման կիրառվելիք համակարգը:

---

ՀԱՎԵԼՎԱԾ III

**Թափոնների գործածության օբյեկտների դասակարգումը սահմանելու չափորոշիչները**

Թափոնների գործածության օբյեկտը դասակարգվում է որպես Ա դասի օբյեկտ, եթե՝

- ձախողում կամ ոչ ճիշտ աշխատանք, օրինակ՝ թափոնակույտի փլուզում կամ պատվարի պայթյուն, որը կարող է առաջացնել խոշոր վթար՝ ելնելով վտանգի գնահատումից, որը կատարվում է՝ հաշվի առնելով այնպիսի գործոնները, ինչպիսիք են թափոնների գործածության օբյեկտի ներկա կամ ապագա չափը, վայրը և բնապահպանական ազդեցությունը, կամ
- այն պարունակում է թափոններ, որոնք դասակարգվում են որպես որոշակի սահմանից բարձր վտանգավորության աստիճան ունեցող թափոններ՝ համաձայն 91/689/ԵՏՀ հրահանգի, կամ
- այն պարունակում է նյութեր կամ պատրաստուկներ, որոնք դասակարգվում են որպես որոշակի սահմանից բարձր վտանգավորության աստիճան ունեցող նյութեր կամ պատրաստուկներ՝ համաձայն 67/548/ԵՏՀ հրահանգի:

---

*ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ, ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ*

Եվրոպական պառլամենտը, Խորհուրդը և Հանձնաժողովը ողջունում են Բուլղարիայի և Ռումինիայի համատեղ հռչակագիրը՝ «Արդյունահանման արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին» ակնկալվող հրահանգի իրականացման մասին:

---

(1) ՊՏ C 80, 30.03.2004թ., էջ 35:

(2) ՊՏ C 109, 30.04.2004թ., էջ 33:

(3) Եվրոպական պառլամենտի 2004 թվականի մարտի 31-ի եզրակացություն (ՊՏ C 103 E, 29.04.2004թ., էջ 451), Խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 172 E, 12.07.2005թ., էջ 1) և Եվրոպական պառլամենտի 2005 թվականի սեպտեմբերի 6-ի դիրքորոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում): Եվրոպական պառլամենտի 2006 թվականի հունվարի 18-ի օրենսդրական որոշում և Խորհրդի 2006 թվականի հունվարի 30-ի որոշում:

(4) ՊՏ L 345, 31.12.2003թ., էջ 97:

(5) ՊՏ L 257, 10.10.1996թ., էջ 26: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 166/2006 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 33, 4.02.2006թ., էջ 1):

(6) ՊՏ C 65 E, 14.03.2002թ., էջ 382:

(7) ՊՏ L 242, 10.09.2002թ., էջ 1:

(8) ՊՏ L 194, 25.07.1975թ., էջ 39: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1):

(9) ՊՏ L 182, 16.07.1999թ., էջ 1: Թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ:

(10) «Հորատման միջոցով հանքարդյունահանման արդյունաբերությունների աշխատողների անվտանգության և առողջության պաշտպանության բարելավման համար նվազագույն պահանջների վերաբերյալ» Խորհրդի 1992 թվականի նոյեմբերի 3-ի 92/91/ԵՏՀ հրահանգ (տասնմեկերորդ անհատական հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով) (ՊՏ L 348, 28.11.1992թ., էջ 9):

(11) «Վերգետնյա և ստորգետնյա հանքարդյունահանման արդյունաբերությունների աշխատողների անվտանգության ու առողջության պաշտպանության բարելավման համար նվազագույն պահանջների վերաբերյալ» Խորհրդի 1992 թվականի դեկտեմբերի 3-ի 92/104/ԵՏՀ հրահանգ (տասներկուերորդ անհատական հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով) (ՊՏ L 404, 31.12.1992թ., էջ 10):

(12) ՊՏ L 327, 22.12.2000թ., էջ 1: Թիվ 2455/2001/ԵՀ որոշմամբ փոփոխված հրահանգ (ՊՏ L 331, 15.12.2001թ., էջ 1):

(13) ՊՏ L 143, 30.04.2004թ., էջ 56:

(14) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

(15) ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

(16) ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 20: Թիվ 166/2006 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ:

(17) Խորհրդի 1967 թվականի հունիսի 27-ի թիվ 67/548/ԵՏՀ հրահանգ՝ «Վտանգավոր նյութերի դասակարգման, փաթեթավորման և պիտակավորմանը վերաբերող իրավական ակտերի, կանոնակարգերի ու վարչական ակտերի համապատասխանեցման մասին» (ՊՏ 196, 16.08.1967թ., էջ 1): Հանձնաժողովի 2004/73/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված Հրահանգ (ՊՏ L 152, 30.04.2004թ., էջ 1):

(18) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի մայիսի 31-ի 1999/45/ԵՀ հրահանգ «Վտանգավոր պատրաստուկների դասակարգման, փաթեթավորման և

պիտակավորման վերաբերյալ անդամ պետությունների իրավական ակտերի, կանոնակարգերի ու վարչական ակտերի համապատասխանեցման մասին» (ՊՏ L 200, 30.07.1999թ., էջ 1): Հանձնաժողովի թիվ 2006/8/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված Հրահանգ (ՊՏ L 19, 24.01.2006թ., էջ 12):

(19) Խորհրդի 1985 թվականի հունիսի 27-ի թիվ 85/337/ԵՏՀ հրահանգ «Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական և մասնավոր նախագծերի ազդեցությունները գնահատելու մասին» (ՊՏ թիվ L 175, 5.07.1985թ., էջ. 40): Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003/35/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված Հրահանգ (ՊՏ L 156, 25.06. 2003թ., էջ 17):

(20) ՊՏ L 41, 14.02.2003թ., էջ 26:

(21) Խորհրդի 1976 թվականի մայիսի 4-ի 76/464/ԵՏՀ հրահանգ «Համայնքի ջրային միջավայր արտանետված որոշակի վտանգավոր նյութերից առաջացող աղտոտման մասին» (ՊՏ L 129, 18.05.1976թ., էջ. 23): 2000/60/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ:

(22) Խորհրդի 1979 թվականի դեկտեմբերի 17-ի 80/68/ԵՏՀ հրահանգ «Որոշակի վտանգավոր նյութերից առաջացող աղտոտումից ստորգետնյա ջրերի պաշտպանության մասին» (ՊՏ L 20, 26.01.1980թ., էջ. 43): 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված Հրահանգ (ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48) :

(23) ՊՏ L 102, 11.04.2001թ., էջ 15:

(24) Հանձնաժողովի 2000 թվականի մայիսի 3-ի 2000/532/ԵՀ որոշմամբ փոխարինվող՝ «Թափոնների մասին» Խորհրդի 75/442/ԵՏՀ հրահանգի 1(ա) հոդվածի համաձայն թափոնների ցուցակ սահմանող՝ 94/3/ԵՀ որոշում և «Վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի 91/689/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածի համաձայն վտանգավոր թափոնների ցուցակ սահմանող՝ Խորհրդի 94/904/ԵՀ որոշում (ՊՏ L 226, 06.09.2000թ., էջ 3): Խորհրդի 2001/573/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված Որոշում (ՊՏ L 203, 28.07.2001թ., էջ 18):